350

210
2-12

1897

2010

ՀՕՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ԴԱՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

ՀԱՄԱՌՕՏ ԿՐՕՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

236

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
U.S.S.R. Publicnaya Biblioteka
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Ա. ՀԱԹԷԼԵԱՆ

ԱՂԳՈՒՅՑ ԴԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԻՋԻՆ ԴԱՍԸՆԹԱՑԻՆ ՀԱՄԱՐ

معارف نظارت جلیله‌سنك فی ۱ ذی‌القعده سنه ۳۱٤
وفی ۲۲ مارت‌سنه ۳۱۳ تاریخلو و ٤٥ نومرولی رخ
مه‌سیله و سمپاد داودیان معرفتیله طبع اولنمش

Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ
1897

1004
197305
990
85-24
2(075)
Հ-12

11655

220
585-ՀԿ
2(075)
3-19

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Նկատելով որ ազգային վարժարաններու մէջ Կրօնի ուսումը ցարդ աստուածային ստորոգելիքներու և կարգ մը վարդապետութեանց նկարագրութիւնն է. նկատելով որ այդ անխաղաց ոգիով բարոյականի ամուր խարիսխներն հիմ չեն գտներ յաւէտ աշակերտի սրտին ու հոգւոյն մէջ. և մանաւանդ բոլորովին նորութիւն մը մտցնելու խորհրդով՝ պատրաստեցի սոյն համառօտ դասագիրքն (միջին դասընթացքներու համար), մինչ կը պաշտօնավարէի Նիկոմիդիոյ Ազգ. վարժարանին մէջ։

Աւելորդ չեմ համարիր ըսել Կրօնի Պատ. Ուսուցիչներուն թէ՝ նպատակայարմար կ'ըլլայ, ներկայ ուղղութեամբ դասախօսութեանց ամբողջ ժամուն, համընթաց ընել Աւետարանի ընթերցումը դասին վերաբերմամբ. (օր. Զատկի դասը երբ կ'աւանդուի՝ աւուր պատշաճի աւետարաններ կարդացուելու են, նմանապէս և ուրիշներ)։ Այսպէս, պարբերաբար, Աւետարանի հատուածներ — բան մը որ շատ քիչ կը տեսնուի — կը կարծեմ թէ միշտ թարմ պիտի պահեն աշակերտի մտքին մէջ առողջ և մաքուր բարոյականի ոգին, գերծ՝ մի և նոյն ժամանակ՝ կոյր և սնոտի նախապաշարումներէ. վասն զի կը հաւատանք իսկ թէ՝ «Աւետարանն Աստուծմէ մարդոց տրուած պարգեւներու գեղեցկագոյնն է»։

Ու պիտի փափաքէի, — ուրիշ նորութիւն մ'ալ, — որ մեր Շարականներու կարեւորներն և շարունակ գործածականներն իրենց գրուածքին տեսակէտով վերլուծել տային աշակերտներուն. այնպիսիներն, այո՛, որոնք — իրենց վեհութեամբ նուիրական — իմաստ և գաղափար կը պարունակեն իրաւամբ։

Եւ դնելով ասիկայ ալ դպրոցական դասագրքերու շարքին մէջ՝ իբր դուշնաքեայ ծառայութիւն մը՝ կը յուսամ հաշտ աչօք կը նային Կրօնի պատուարժան Դասախօսները։

1897, Յունիս 1 Ա. ՀԱԲԵԼԵԱՆ

Ներկայ դասագիրքս կրնայ արուիլ այն ուսանողներուն, որոնք աւարտած են « Տարրական Ընթացք Կրօնի Ուսման » անուն գիրքը։

ՀԱՄԱՌՕՏ

ԿՐՕՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԵԿԵՂԵՑԻԻՆ ԳԼԽԱՒՈՐ ՏՕՆԵՐԸ

ՏԱՂԱՒԱՐՆԵՐ

Ծնունդ Յիսուսի Քրիստոսի

Գաբրիէլ հրեշտակն Աստուծոյ՝ արդէն աւետած էր Սուրբ կոյս Մարիամին թէ Քրիստոսը պիտի ծնանէր։

Արդ՝ Հռովմայեցի Օգոստոս կայսրին իշխանութեան ժամանակ, Մարիամ և իր այրը Յովսէփ, երբ Բեթհեղէմ կ'երթային, իրենց անունները նշանակել տալու, հոն՝ աշխարհի Փրկիչը՝ մարգարէներուն գուշակութեան համեմատ, ծնաւ խոնարհութեամբ, մսուրի մը մէջ,

Փրկչին ծնունդը հասարակաց հաշուով տեղի ունեցաւ աշխարհի արարչութեան 4000 թուա-

կանին։ — Հրեշտակներ « Փա՛ռք ի բարձունս » երգելով՝ Աստուծոյ ծնունդը առաջին անգամ յայտնեցին հովիւներուն, որ եկան երկրպագել անոր։ Նոյնպէս մոգեր, առաջնորդութեամբ նորատեսիլ մի աստղի, եկան երկրպագելու մարդացեալ Աստուծոյն, մատուցանելով ընծաներ՝ ոսկի, կնդրուկ և զմուռս։

Մկրտութիւն Յիսուսի

Երեսուն տարեկան էր Յիսուս Քրիստոս երբ գնաց Յովհաննէս Մկրտիչէն մկրտուիլ Յորդանան գետին մէջ։ Ինք ամենեւին մեղք չունէր, սակայն մարդոց մեղքերն իր վրայ բարձեր էր։ Յովհաննէս՝ երբ տեսաւ իր առջեւ կանգնած Քրիստոս, զարհուրեցաւ և ըսաւ. « Պէտք է որ ե՛ս քեզմէ մկրտուիմ, և դուն ինծի՞ կուգաս »։ Բայց Քրիստոս պատասխանեց Յովհաննէսին. « Այո՛, պէտք է որ օրէնքն ու արդարութիւնը ի գործ դնեմ »,

Քրիստոսի Յորդանան գետ իջած պահուն, երկինք բացուեցաւ, Ս. Հոգին Անոր վրայ հանգչեցաւ աղաւնիի նմանութեամբ և հայրական ձայնը երկինքէն վկայեց թէ. « Դա՛ է որդի իմ սիրելի, ընդ որ ես հաճեցայ, դմա լուարուք »։ Քրիստոս երբ մկրտուեցաւ, անապատ քաշուե-

ցաւ. հոն քառասնօրեայ պահեցողութիւնը կատարելէ ու փորձիչ սատանային յաղթելէ յետոյ, սկսաւ իւր աստուածային քարոզութիւններուն։ (Մտթ. Գլ. Դ. 1-12)։

Յիսուսի Ծնունդը եւ Մկրտութիւնը (Աստուածայայտնութիւնը) մէկ տեղ կը կատարէ Հայոց Ս. Եկեղեցին, ամեն տարի Յունուար ամսոյ 6ին, Ս. Հայրապետներու կանոնադրութեան համեմատ. իսկ ութ օր վերջը՝ Խնդիրոփոխ՝ Անուանակոչութեան տօնը։

Ծննդեան տօնին երգուած շարականները կը թնդացնեն Ս. Եկեղեցիին կամարներն, և ի՛նչ իմաստալից շարական է « Խորհուրդ մեծը», մը-կրտութեան առեն երգուած Զրօրհնէքի անուշ տաղերը, որոնք ամենն ալ գովութիւն և փառաբանութիւն են մանուկ Աստուծոյն։

Հայոց Ս. Եկեղեցին այսպիսի հոգեւոր ուրախութեանց մէջ չի մոռնար նաև ննջեցեալները, ուստի, իւրաքանչիւր Տաղաւարի երկրորդ օրն՝ յիշատակ է ընդհանուր մեռելներու և անոնց համար յատուկ հոգեհանգիստի աղօթք ու շարականներ կը կարդացուին այն օրը։

Զատիկ կամ Յարութիւն

Տէր Յիսուսի մարմինը խաչին վրայէն ի գերեզման դրուեցաւ երեկոյեան դէմ, ուրբաթ օր։ Հոգին բաժնուելով մարմինէն՝ իջաւ երկրիս ստորին տեղերը, մխիթարելու համար արդարներուն հոգիները։

Միաշաբաթի առաւօտուն կանուխ մեծ շարժում մը եղաւ։ Հրեշտակներ իջնելով երկինքէն՝ ի բաց թաւալեցուցին գերեզմանին վէմն և նըստան վրան։ Պահապանները զարհուրեցան և փութացին պատմել իշխաններուն, Յիսուս ելաւ գերեզմանէն փառաւորեալ մարմնով։ Զայդ չգիտնալով՝ շատ կանուխ, Մարիամ Մագդալենացի և ուրիշ բարեպաշտ կիներ եկած էին օծել և խնկել տէրունական մարմինը։ Հո՛ն տեսան միայն լուսապայծառ հրեշտակն, որ կ'աւետէր Յիսուսի Յարութիւնը։

Երբ կիները զուարճախառն երկիւղով դարձան և պատմեցին Պետրոսի և Յովհաննէսի, անոնք գերեզման երթալ փութացին, սակայն պատգամ ընդունելով հրեշտակէն որ երթան Գալիլիա և հոն տեսնեն Տէրը՝ ետ դարձան։ Իսկ Մագդալենացին Մարիամ մինակ մնաց հոն. և որովհետեւ արցունք կը թափէր և եռանդագին սէր ունէր, ուստի և արժանի եղաւ առաջին անգամ

տեսնելու յարուցեալ Քրիստոսը, բայց չկրցաւ մօտենալ Անոր։

Ընդհանուր քրիստոնեաներուն Զատիկը Քրիստոսի յարութիւն առած միաշաբաթ օրն (առաւօտն) է, զոր յետոյ Առաքեալները Կիրակի անունով նուիրագործեցին, և փոխանակ հրէական շաբաթ օրուան, որոշեցին այդ օրը սուրբ պահել ի պատիւ և ի յիշատակ յարութեան Քրիստոսի։ Զատիկը կը կոչուի նաեւ Պասէք կամ Փէսախ, որ կը նշանակէ անցք, եղք. յիշատակ է Հրեաներուն Եգիպտոսէ ելլելուն։

Այս Զատկի տօնը մեծ հանդիսաւորութեամբ կը կատարէ Հայ Եկեղեցին, Յիսուսի չարչարանաց, խաչելութեան, թաղման և յարութեան բոլոր Աւետարանները կը կարդացուին ի լուր ժողովրդեան։ Մեր երանաշնորհ Հայրապետներուն՝ յատուկ այս տօնին համար գրած օրհնութիւններն ու շարականներն սքանչելի են թէ՛ իրենց իմաստին և թէ՛ եղանակին կողմանէ։

Ճաշու շարականը « Յարեա՛ Քրիստոս »ը ի՛նչ սրտայոյզ եղանակ ունի։

Այլակերպութիւն

Կարդանք Մատթէոսի Աւետարանին ԺԷ. գլուխը. « Եւ վեց օրէն ետեւ Յիսուս իրեն հետ առաւ Պետրոսն ու Յակոբոսը և անոր եղբայրն

Յովհաննէսը, և զանոնք բարձր լեռ մը հանեց առանձինն, և անոնց առջեւ այլակերպեցաւ եւ Անոր երեսը փայլեցաւ արեգակի նման, և հանդերձները լոյսի պէս սպիտակ եղան։ Եւ ահա երեւցան անոնց Մովսէս և Եղիա, և կը խօսէին Անոր հետ։ Պատասխան տուաւ Պետրոս և ըսաւ Յիսուսի. « Տէ՛ր. աղէկ է որ հոս կենանք, եթէ կամիս՝ երեք տաղաւար շինենք հոս. մին քեզ, մին Մովսէսի և մին Եղիայի։ »

Եւ մինչ ան կը խօսէր, ահա՛ լուսաւոր ամպ մը անոնց վրայ հովանի եղաւ և ամպէն ձայն եկաւ ըսելով. « Այդ է իմ սիրելի Որդիս, որուն հաճած եմ. ատոր մտիկ ըրէք։ »։ Աշակերտները երբ լսեցին, ինկան երեսի վրայ և շա՛տ վախցան։ Եւ Յիսուս մօտենալով դպաւ անոնց եւ ըսաւ. « Ելէ՛ք եւ մի՛ վախնաք »։ Վերցուցին իրենց աչքերն եւ ո՛չ ոք տեսան. բայց միայն Յիսուս։ Եւ երբ այն լեռնէն վար կ'իջնէին, Յիսուս պատուիրեց անոնց ու ըսաւ. « Այդ տեսիլը մարդու մի՛ ըսէք, մինչեւ Մարդու Որդին մեռելներէն յարութիւն առնէ »։

Քրիստոսէն շատ տարիներ առաջ, երբ ուրիշ ազգերու պէս Հայերն ալ կռապաշտութեան խաւարին մէջ էին, տարին մէկ անգամ, Նաւասարդ ամսու առաջին օրը՝ մեհեաններու մէջ աղաւնի կը թռցունէին և իրարու վրայ ջուր սրսկելով վարդեր կը ցանէին ի յիշատակ ջրհեղեղին եւ ի պատիւ Անահիտ կոչուած չաստուածուհիին,

Մեր հոգիներուն լուսատու Ս. Հայրը Գրիգոր, ինչպէս ամեն հին սովորութիւնները, նոյնպէս այս հեթանոսական տօնը ջնջեց և անոր տեղ հաստատեց այս պայծառակերպութեան յիշատակութիւնը՝ որ կը կոչուի Վարդավառ։

Վարդավառի շարականն է. « Որ ի լերինն այլակերպեալ » և ուրիշներ. իսկ Ս. Պատարագի ճաշուին շարականն է « Ուրախացի՛ր, պսակ կուսից », որուն մէջ կը գովաբանուի Ս. Կոյսն իր որդիին սքանչելիքներուն համար։

Վերափոխում Ս. Աստուածածնի

Ս. Կոյս Աստուածածինը, Քրիստոսի համբարձումէն վերջ, Առաքեալներուն եւ իւղաբեր կիներուն հետ կը կենակցեր բարեպաշտութեամբ, միշտ իր քովը՝ունենալով, իբր որդի, Յիսուսի սիրելի աշակերտն Յովհաննէս։

Վաթսուն տարիներէ աւելի ապրեցաւ և ապա վախճանեցաւ։ Աշակերտներն ու հաւատաւոր կիներ անուշահոտ խունկերով ու մոմերով և մեծավայելուչ հանդէսով տարին Թաղել գերեզմանի մէջ։

Աւանդութիւնը կ'ըսէ թէ առաքեալներէ մին, Բարթուղիմէոս, բացակայ ըլլալով՝ երբ եկաւ,

փափագեցաւ վերջին անգամ տեսնել Տիրամայրը։ Ուստի բանալ տուաւ գերեզմանն, բայց չը գտաւ հոն տենչալի մայրը. — հանդերձները մէկ կողմ ծրարուած էին, եւ եկած էր Քրիստոս հրեշտակներով մէկտեղ վերափոխել իր Մայրը երկինք՝ որպէս զի հոն վայելէ ամեն կրած նեղութիւններուն ու ցաւերուն վերջնական հանգիստը։

Եւ թէպէտ Տիրամայրը գացած էր երկինք, տախտակի վրայ տպաւորուած գտան հրաշքով անոր պատկերը։ — Ուրիշ աւանդութիւն մը, նոյնպէս Յայսմաւուրը կ'ըսեն թէ՝ Յովհաննէս աւետարանիչի քով կը գտնուէր Ս. Կոյսին պատկերը՝ կիպարիս փայտի վրայ նկարուած, զոր Բարթուղիմէոս առնելով գնաց զանազան կողմեր և ի Հայս՝ անով հրաշքներ գործեց, շինեց եկեղեցիներ, ինչպէս նաև փառաւոր վանք մը Հոգեաց անուն, ուր գրաւ Ս. Աստուածածնի պատկերը։

Այս Վերափոխման տօնը հանդիսաւորապէս կը կատարէ մեր Ս. Եկեղեցին։ « Այսօր Ժողովեալ սրբոց » և « Անթառամ ծաղիկ » շարականները կ'երգուին այս տօնին։

Խաչվերաց

Քրիստոսի 50 թուականին, հռովմայեցի կըղզիոս կայսրին կինը Պատրոնիկէ, հաւատացեալ ըլլալով՝ Երուսաղէմ կուգայ և իմանալով որ խաչն աղբիւներուն մէջ ձգուած ՃՏացած է, կը հրամայէ մեծ հանդէսով զայն կանգնել Գողգոթայի վրայ։

Երուսաղէմի առաջին եպիսկոպոս Յակոբոս Տեառն-եղբայր կոչուած առաքեալը, զայն կը վերցնէ և կ'օրհնէ աչխարհի չորս կողմերն, գոչելով. « Խաչի քո, Քրիստոս, երկիրպագանեմք »։ Այս սրտառուչ աղօթքը մեր Ս. Սահակ Հայրապետն ընդարձակելով՝ կը հրամայէ երգել, եւ Հայոց Ս. Եկեղեցին Աւագ Ուրբաթ, Աւագ Շաբաթ, Զատկին և այս Խաչվերացի տօնին կ'երգէ զմայլելի եղանակով։

Խաչի վրայ շատ ներբողներ կան գրուած մեր Շարակնոցին մէջ։ Այս Խաչվերացի տօնին կը կարդան Յիսուսի խաչելութեան վրայ խօսող Աւետարաններն և ի գովեստ խաչին գրուած շատ մը շարականներ։ — « Որ զանարատ բազուկս քո » եւ անոր կարգէն եղող շարականներ կը բարեբանեն Յիսուսի անհուն մարդասիրութիւնը և Խաչին փրկագործութիւնը։

ՏԷՐՈՒՆԻ ՏՕՆԵՐ

Ս. Կոյս Աստուածածին

Հրէաստանի Նազարէթ քաղաքին մէջ կը բնակէին ընտանիք մը, Յովակիմ և Աննա անուն։ Աստուած այս ընտանիքը մխիթարելու համար պարգևեց զաւակ մը, որուն անունն էր Մարիամ։ Այս առաքինի ծնողքը՝ երբ իրենց աղջիկն երեք տարեկան եղաւ՝ Տիրոջը տաճարին նուիրեցին, հաւատացեալ հրէաներու սովորութեան համեմատ։ Անկէ վերջ այս կոյսը մեծցաւ եւ զօրացաւ Ս. Հոգիին շնորհքովը։

Յովհաննէս Մկրտչին աւետաւոր ծնունդէն վեց ամիս վերջը, նոյն ինքն Գաբրիէլ հրեշտակն Աստուծոյ՝ խրկուեցաւ Ս. Կոյս Մարիամին, որ Դաւիթի սերունդէն էր և նոյն ազգատոհմէն Յովսէփ անուն արդար մարդու մը նշանուած։ Գաբրիէլ Աստուծոյ կողմանէ իմացուց Մարիամին թէ՝ պիտի ծնանի որդի մը, որուն անունը պիտի կոչուի, Կ'ըսէ, Յիսուս։ Նա մեծ պիտի ըլլայ և Բարձրեալին որդի պիտի կոչուի. Տիրոջմէն պիտի ընդունի իր հօրը Դաւիթի աթոռը, և պիտի թագաւորէ յաւիտեան Յակոբին տանը վրայ։ Մարիամ հնա-

զանդեցաւ պատգամին, որ երկինքէն խրկուած էր։

Հայոց եկեղեցին արժանավայել կերպով կը կատարէ Ս. Կոյսին տօները, որոնք անշարժ տօներ են. Աւետումը՝ Ապրիլ 7. Ծնունդը՝ Սեպտ 8. ի Տաճարն Ընծայումը՝ Նոյեմբեր 21. և Յղութիւն Աննայէն՝ Դեկտեմբեր 9 (1)։

Աղօթքներու և մաղթանքներու մէջ զանիկայ բարեխօս կը բռնենք։

Մեր Հայրապետներ « Մեծացուցէ » ներով և ուրիշ գողտրիկ շարականներով գոված ու երգած են Ս. Կոյսին փառքն ու մեծութիւնը։

Տեառնընդառաջ

Յիսուս Քրիստոս երբ քառասուն օրուան եղաւ, իր մայրն Մարիամ, Յովսէփին հետ, Հրեաներու սովորութեան համեմատ տարաւ զանիկայ Տաճարը, եւ որովհետեւ աղքատիկ ընտանիք էին, չունէին մեծագին նուէրներ, ուստի իրենց հետ առին երկու տատրակներ։

Հոն, Սիմէոն անուն ծերունին, որ Աստուծմէ հրաման առած էր Փրկիչը տեսնելէ վերջ մեռ-

---

[1] Այս տօներէն զատ, Եկեղեցին նմանապէս կը կատարէ « Գիւտ Գօտւոյ և Գիւտ Տփոյ Ս. Աստուածածնի » տօները։

նիլ, գիրկն առաւ Յիսուս մանուկը՝ օրհնեց եւ ըսաւ։ «Ահա՛ աչքս տեսաւ Փրկիչն՝ հեթանոսներուն լոյսը, ասկէ վերջը թո՛ղ մեռնիմ»։ Ս. Կոյս Մարիամին ալ ըսաւ, «Ահա՛այս (Յիսուս) Իսրայէլի մէջ հակառակութեան նշան ըլլալով՝ շատերուն կորսուելուն և շատերուն ալ ապրելուն պատճառ պիտի ըլլայ։ Եւ քու անձէդ սուր պիտի անցնի, որպէս զի բազում սրտերու խորհուրդները յայտնուին»։ (Ղուկ. Գլ. Բ. 34—35).

Հոն էր նաև Աննա անունով որբեւայրի Մարգարէ կինը, որ շնորհակալ եղաւ Աստուծոյ՝ Մեսիան, աշխարհի փրկիչը, տեսնելուն համար։

Տեառնընդառաջի տօնը կը կատարէ մեր Հայոց Եկեղեցին՝ Ս. Ծնունդէն քառասուն օր վերջը, այսինքն Փետրուար ամսոյ 14ին՝ անփոփոխ. Տեառնընդառաջ կը նշանակէ՝ Տիրոջ առջեւ ելլել վառուած մոմերով և անուշահոտ խունկերով։

Երբ արարողութիւններն աւարտին, բարեպաշտ ժողովուրդներ՝ մոմ ի ձեռին կ'երթան իրենց տան ճրագները վառել։ Կանուխէն, կ'երեւի թէ. Եկեղեցիին մէջ կը վառէին կրակ, բայց արգիլուեր է։ Տօնացոյցը կը գրէ. «Կրակի բոլորտիքը դառնալ արհամարհելի բան է, վասն զի ոգէտ մարդիկներ մոցուցած են զայն։»

Առաջ, երբ Հայերը կռապաշտ էին, բաց տեղեր ահագին կրակներ կը վառէին ի պատիւ իրենց չաստուածներուն, և երիտասարդներն մէկ կողմ ու օրիորդները միւս կողմ պար բռնած՝ կը

խաղային և կը ցատքէին բոցերուն վրայէն։ Հիմայ ալ կայ այդ սովորութիւնը մեր մէջ. — Թաղերու մէջ փսխաթներով և կողոշներով հիւսուած կրակներ կը վառեն, որուն ռամիկ ժողովուրդը Տեռնտաս անունը կուտայ։ Հայ ժողովուրդը կանխաւ Պարսիկներու պէս կրակ կը պաշտեր միանգամայն. բայց այժմ քրիստոնեայ ժողովուրդն Աստուած կը փառաբանէ լուսավառութեամբ, վասն զի Յիսուս Քրիստոս եղաւ աշխարհի սիրոյ կրակը և ճշմարիտ լոյսը։

Այս Տեառնընդառաջի տօնին երգուած «Մարմնացեալդ ի կուսէն» և ուրիշ շարականներն Յիսուսի Տաճար երթալը, Ծերունիէն ընդունուիլը և համայն աշխարհի տրուած մեծ աւետիսները կը հռչակեն։

19790
ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հանրային Գրադարան
Հ.Ս.Խ.Հ.
С.С.Р.А.
7/XI-1922
Գրադարան
Ա. ՄԵԼՔՈՆԻԱՆԻ ԱՆՎԱՆ

Յիսուս, երբ կը մտնեայ Բեթփագէ և Բեթանիա գիւղերուն, իր աշակերտներէն երկուքը կը խրկէ, որպէս զի երթան բերեն կապուած աւանակ մը, ըսելով թէ Տէրը անոր պէտք ունի։

Աշակերտները կը կատարեն Յիսուսի հրամանը, հանդերձներ կը դնեն գրաստին վրայ և կը հեծցնեն Յիսուսը։ Ժողովուրդը ցնծութեամբ՝ ո-

մանք իրենց հանդերձները, և ուրիշներ ծառերէ ոստեր կտրելով՝ ճամբուն վրայ կը սփռէին աղաղակելով. « Ովսաննա որդւոյ Դաւթի, օրհնեալ եկեալդ անուամբ Տեառն »: Այսպիսի հանդէսներով մտաւ Յիսուս Երուսաղէմ, սակայն ի գութ շարժելով լացաւ անոր ապագայ կործանումին վրայ, վասն զի չճանչցաւ Աստուծոյ այցելութեան ժամանակը:

Ամեն եկեղեցիներ կը զարդարուին արմաւենիի և ձիթենիի ճիւղերով և ծաղիկներով, անոր համար այս տօնը կը կոչուի Ծաղկազարդ: Հայրապետներու գրած գեղեցիկ շարականները մեզի կը բացատրեն թէ Քրիստոս հեթանոս ժողովուրդներն ալ հրաւիրեց Աստուծոյ որդեգիր և արքայութեան ժառանգ ըլլալ: Այս տօնին կ'երգուին «Որ վերօրհնիս», «Թագաւոր գոլով» «Ուրախ լե՛ր, սուրբ եկեղեցի» շարականները:

Ծաղկազարդի երեկոյին կը կատարուի Դրբեբացեմի արարողութիւնը, օրինակ Քրիստոսի միւսանգամ գալստեան և դատաստանի: Ժամերգութենէն վերջ կը սկսի այդ արարողութիւնը: Դրպիրք ապաշխարութեան շարականներ կ'երգեն: Երեց քահանան լալագին կը խնդրէ Աստուծմէ որ ողորմութեան դուռները բանայ և ընդունի զինքն ու մանուկները, այսինքն ժողովուրդը: Ու երբ ներսը գտնուած քահանան՝ Աստուծոյ կողմանէ՝ մեղաւորներու խոստովանութիւնն ու ապաշխարութիւնը կը լսէ, զանոնք կը հրաւիրէ

ժառանգելու խոստացուած արքայութիւնը:

« Եկա՛յք, օրհեալք Հօր իմոյ» ըսուելէ վերջը՝ խորանին վարագոյրը կը բացուի և գոհաբանական երգ մը և աւետարան կը կարդացուի, վասն զի արժանի եղան տեսութեան անմահ փեսային Քրիստոսի:

Աւագ Շաբաթ

Յիսուսի փրկագործութեան ամենամեծ խորհուրդը՝ սիրոյ և բարոյականի վսեմ դասերն՝ այս շաբթու եկեղեցիին մէջ կ'աւանդուին. ուստի այս շաբաթը կոչուած է Աւագ, այսինքն Մեծ-Շաբաթ.

Բշ. — Այս երեկոյին Հայոց եկեղեցին Ս. Գրքէն Ծննդոց առաջին գլուխները կը կարդայ ի յիշատակ արարչագործութեան և նախածնողաց մեղանչելուն:

Դշ. — Յիսուս կը մարգարէանայ Տաճարին և Երուսաղէմի կործանումը, և անոնց նկարագիրը կ'ընէ: Վերջին դատաստանի պատկերները մեր աչքին առջեւ կը դնէ. Տանուտէր Մարդու և Իմաստուն Կոյսերու առակներով: Այս երեկոյ Նոյնպէս Զրհեղեղի և Նոյի տապանէն ելլելուն պատմութիւնը կը կարդացուի:

Դշ. — Քահանայապետներ, ծերեր և դպիր-

ներ կը խորհին Յիսուսը բռնել։ Յուդա՝ տասներկուքէն մին՝ ստակով կը խոստանայ յարմար առթիւ մատնել զԱ.ին անոնց ձեռք։ Երեկոյին Ս. Գիրքը կը խօսի Սոդոմ և Գոմար քաղաքներուն հրակէզ կործանման և Աբրահամի միջնորդութեան վրայ։

Եշ. — Յիսուսի տնօրինական գործերը կ'ըսկըսին։ Ճաշու ժամուն ապաշխարութեան կարգ կը կատարուի. Սաղմոսներէ և գրքերէ վերջ՝ Ս. Բարսեղ Հայրապետի աղօթքը կը կարդացուի եւ ապաշխարողներուն վրայ ալ Յովհան Ոսկեբերանի օրհնութեան աղօթքը։ Յիսուս այսօր կը հաստատէ ամենասուրբ Հաղորդութեան խորհուրդը վերնատան մէջ. կ'օրհնէ հացն, ու կուտայ աշակերտներուն՝ ըսելով. « Առէ՛ք, կերէ՛ք, այս է մարմին իմ։ » Բաժակ մը գինի ալ առնելով՝ կը գոհանայ և կ'ըսէ. « Արբէ՛ք ի դմանէ ամենեքեան, զի այդ է արիւն իմ նորոյ ուխտի. որ ի վերայ բազմաց հեղանի ի թողութիւն մեղաց։ » Այս աւետարանի ընթերցումէն վերջը, Հաւատամքի ատեն, սեղանը՝ որ բոլորովին սպիտակ զարդարուած և գոց է՝ կը բացուի. այնուհետեւ հանդիսաւոր պատարագ կը մատուցուի։

Երեկոյին Քրիստոս խոնարհութեան և մարդասիրութեան օրինակը կուտայ։ Կը նստի իր աշակերտներուն առջև և կը լուայ անոնց ոտքերը, պատուիրելով որ իրարու նոյնը ընեն։ Ոտնլուայի կարգը, զոր մեր եկեղեցին կը կատարէ, յո-

րինած է Ս. Եփրեմ Հայրապետը, և մեր Գրիգոր Վկայասէր կաթուղիկոսն ալ թարգմանած է, ինչպէս որ կը գրէ Տօնացոյցը։ Այս ատեն կատարուած աղօթքներն ու տաղերը չափէն աւելի յուզիչ և զգայուն են իրենց գրուածքով ու եղանակով։ Հինգշաբթի գիշեր կը կոչուի Լացի Գիշեր. ողբագին շարականներու ընդմիջումով Աւետարաններ կը կարդացուին, սեւաւոք խորանին մոմերը կը մարին, ի նշան Յիսուսի աշակերտներուն ցրուելուն. վերջապէս, կը մնայ միակ մոմ մը ամբողջ Տաճարի ահաւոր մթութեան մէջ. տխուր արարողութիւնները կ'աւարտին « վերջին կտակ » ով։

Ուր. — Յիսուսի չարչարանաց, խաչելութեան և թաղման յիշատակն է։ Տխուր է եկեղեցին, ցորեկը խաչելութեան ու երեկոյին թաղման կարգ կը կատարէ։ Ամենէն հոգենուագ շարականները կ'երգուին. « Պարգեւատուն ամենեցուն » շարականը իր բարձր գրուածքով և յուզիչ եղանակով ամեն աչքերէ արցունքներ կը խլէ։

Շբ. — Յիսուս թաղուած է. գերեզմանը կը կնքուի և պահապան զինուորներ կը դրուին քահանայապետներուն կողմէ։ Երեկոյին Ս. Պատարագ կը մատուցուի. Ճրագալոյց է Յիսուսի Յարութեան։

Համբարձում Քրիստոսի

Յիսուս իր յարութենէն վերջ՝ քառասուն օր աշակերտներուն երեւալով, զանոնք կը հրահանգէ, կը հրամայէ Աւետարանը քարոզել բոլոր աշխարհի. բայց կը պատուիրէ որ սպասեն Երուսաղէմի մէջ այն շնորհքին, զոր պիտի ընդունէին Ս. Հոգիին գալովը։

Եւ զօրացնելով զանոնք յուսով, և հաստատելով հաւատքի մէջ՝ տարաւ մինչեւ Բեթանիա և անկէ Ձիթենիներուն լեռը։ Հոն բազկատարած՝ օրհնութիւն տուաւ եւ վերացաւ դէպի երկինք, և ամպը զԱնիկայ ծածկեց առաքեալներուն տեսութենէն։ Մինչդեռ անոնք ապշած՝ Յիսուսի ընթացքը կը դիտէին, ահա՛ երկու հրեշտակներ, սպիտակ հանդերձներով, մարդկեղէն կերպարանքով երեւալով՝ ըսին անոնց. «Այս Յիսուսը որ երկինք վերացաւ, այնպէս պիտի գայ օր մը »։ Այն ատեն առաքեալները երկրպագելով՝ ուրախութեամբ դարձան Երուսաղէմ և հանապազ տաճարին մէջ էին, կը գովէին և կ՚օրհնէին Աստուած, և կը սպասէին երկնային զօրութիւնն ընդունելու։

Համբարձման տօնը միշտ հինգշաբթի օր կը պատահի, և այս տօնին կ՚երգուին « Որք տընկակից », « Համբարձաւ Տէրն մեր » և ուրիշ շարականներ աւուր պատշաճի։

Երկրորդ Ծաղկազարդ

Համբարձման տօնին յաջորդող կիրակին կը կոչուի Երկրորդ Ծաղկազարդ։ Առաջին Ծաղկազարդը, ինչպէս ըսինք, Քրիստոսի յաղթական մուտքն էր Երուսաղէմ, իսկ երկրորդ Ծաղկազարդը յիշատակ է Յիսուսի վերին Երուսաղէմ մտնելուն՝ հրեշտակներու առաջնորդութեամբ։

Հին աւանդութիւն մը կ՚ըսէ թէ՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ, խոր վիրապին մէջ գտնուած ատեն, իրեն սպասաւորութիւն կ՚ընէր հրեշտակ մը։ Երբ այս կիրակին չերեւիր հրեշտակը, Լուսաւորիչ կը հարցնէ պատճառը, ու կ՚իմանայ որ Քրիստոս համբարձած ժամանակ հրեշտակներու չորրորդ դասակարգէն անցած ըլլալով՝ ամեն տարի այդ օրը տօն կը կատարեն եղեր, և որովհետեւ ինքն ալ այդ դասին կը վերաբերէր, հարկադրուած էր մասնակից ըլլալ իր ընկերներուն հանդէսին եւ և ուրախութեան։

Այս տօնին յատուկ երգուած « Մեծահրաշ » շարականը՝ զոր Գրիգոր Վկայասէր կաթուղիկոսը գրած է, կը պատմէ այդ աւանդութիւնը։

Տօն Երեւման Ս. Խաչի

Կոստանդիանոս կայսեր տղուն Կոստանդի օրով, Երուսաղէմի վրայ Գողգոթայէն մինչեւ Զիթենիներուն լեռը՝ լուսաւոր կերպով կ'երեւի Յիսուսի Ս. Խաչին նշանը, զարմացնելով բոլոր Հրեաներն, ու շատերն հաւատքի դարձնելով Քրիստոսի 352 թուականին։ Երուսաղէմի Կիւրեղ հայրապետն տեսնելով այս հրաշալի երեւումը ու կատարուած սքանչելիքը, պատմութեան ձեւով կը գրէ առ կայսրն։ Այս թուղթը տօնին կը կարդացուի առտուան արարողութիւններու միջոցին։

Ինչպէս Խաչի շատ մը շարականներ, նոյնպէս այս տօնին յատուկ երգուած շարականներն ալ գրած է մեր հայրապետներէն մին՝ Սահակ Զորափորեցի պատուական կաթուղիկոսը։ այնքան հոգեշունչ, այնքան իմաստալից կերպով։

Հոգեգալուստ

Յարութենէ քառասուն օր վերջը, երբ Քրիստոս երկինք համբարձաւ, արդէն Ս. Հոգին առաքեալներուն խրկել խոստացած էր, որ զանոնք լուսաւորէ և հրահանգէ։ Մատաթիան, Յուդայի տեղ աղօթքով և վիճակով ընտրուած էր առաքեալներու թիւին մէջ, եւ երբ յիսուներորդ (Պէնտէկոստէ) օրը ժողովուած էին վերնատան մէջ, սաստիկ շարժում մը եղաւ, և Ս. Հոգին հրեղէն լեզուներով իջաւ առաքեալներուն վրայ, տալով անոնց՝ իմաստութիւն, շնորհք եւ հանճար՝ այլ և այլ լեզուներ խօսելու և քարոզելու համար։

Ամենքը սորվեցան զատ զատ լեզուներ, ինչպէս Պետրոս՝ Հռովմայեցւոց լեզուն, Փիլիպպոս՝ Արաբացւոց, Յովհաննէս՝ Կիլիկեցւոց, Բարթուղիմէոս՝ Մարաց, Թադէոսն ալ ուսաւ Հայոց լեզուն. և աշխարհի ամեն կողմը քարոզեցին Աւետարանը։ Թադէոս առաքեալ այս միջոցներուն գնաց Հայերուն մէջ, Տիրոջ խոստումին համեմատ, և սկսաւ քարոզել։

« Առաքելոյ աղաւնոյ » շարականը և միւս բոլոր այս տօնին յատկացեալ երգերը գրած է Ս. Ներսէս Շնորհալի հայրապետը։

Այս Պէնտէկոստէի տօնին կը կարդայ մեր եկեղեցին Ներսէս Լամբրոնացիին գրած մէկ սքանչելի ճառը, լի բանաստեղծութեամբ և վսեմ գաղափարներով։

Վարագայ Խաչ

Խաչի նշանաւոր հրաշքներէն մին կատարուած է Վարագայ լեռին վրայ։ — Հայերուն մէջ աւանդութիւն կար թէ Ս. Հռիփսիմեան կոյսեր, երբ Դիոկղետիանոս կայսեր ժամանակ հալածուեցան, իրենց հետ ունէին Յիսուսի խաչափայտէն մաս մը, ու երբ մի քանին հասան այն լեռին վրայ և վախճանեցան, այդ նուիրական նշխարն ալ անյայտ եղաւ։

Այս բանը գիտնալով՝ ճգնաւոր մը, Թադիկ անուն, յամին 653, նոյն տեղ, վանքի մը մէջ առանձնացած՝ կը խնդրէր Աստուծմէ յայտնել իրեն այն գանձը։ Թադիկի աղօթքն ընդունելի կ'ըլլայ Աստուծոյ, և Խաչափայտը տասներկու լուսեղէն սիւնով կ'երևի ամպերու մէջէն։

Մեր Ներսէս Գ. Կաթուղիկոսը, որ Շինող կը կոչուի, աս լսելով՝ առանձին տօն սահմանեց և յօրինեց շարական վայելուչ «Նշանաւ ամենայաղթ խաչիւդ» անունով։

Գիւտ Խաչ

327 թիւին, Կոստանդիանոսի մայրը, 79 տարեկան, բարեպաշտութեամբ զարդարուած, կ'ուզէ Երուսաղէմի մէջ փառաւոր եկեղեցի մը կանգնել։ Հոն կը տեսնէ ողորմելի վիճակը քաղաքին, վասն զի հեթանոս մարդիկ Գողգոթայի վրայ կուռքերու մեհեաններ կանգնած էին։

Այս քրիստոսասէր դշխոյն կործանել տուաւ զանոնք, և աւանդութեամբ գտաւ Փրկչին տապանը, զոր պեղել տուաւ. երեք խաչ երևեցան և մեռեալ պատանիի մը յարութենէն յայտնուեցաւ Քրիստոսի խաչը, զոր ոսկի տապանակի մէջ պահել տուաւ և չինեց եկեղեցի յանուն Յարութեան Քրիստոսի։ Մի և նոյն ժամանակ, կանգնեց երկու եկեղեցի ալ, մին Բեթղէհէմ՝ ի պատիւ Ծննդեանն և միւսը Ձիթենիներուն լեռը՝ ի յիշատակ Քրիստոսի Համբարձման. շատ մը բարեգործութիւններէ վերջը՝ դարձաւ իր որդիին քով։

Այս խաչին երգուած «Հրաշակերտ», և «Այս օր խնդրի» շարականները խաչի սքանչելիքն և աստուածասէր դշխոյին հաւատքը կը սորվեցնեն.

Ս. Գրիգոր Լուսաւորիչ

Այս աստուածարեալ եւ մեծ անձնաւորութիւնը, Հայերը քրիստոնէական լուսոյ մէջ բերելուն համար, կոչուեցաւ Լուսաւորիչ։

Մեր բոլոր եկեղեցական հայրերուն մէջ Գէղխաւորը կը հանդիսանայ իր առաքելական քարոզութիւններուն համար։ Քրիստոսի և եկեղեցիին սիրուն համար դառն տանջանքի համբերելէ վերջը՝ ձգուեցաւ մահապարտներու խոր վիրապին մէջ, մնալով անցնաս 15 երկար տարիներ՝ Աստուծոյ հրաշքով։ Իր ամբողջ կեանքն անցուց ծառայելով եկեղեցւոյն և արժանի եղաւ Թադէոս առաքեալին ձեռքով հաստատուած և հալածանքի պատճառով յաջորդութիւնը առժամաբար ընդհատեալ աթոռին վրայ բազմիլ, ձեռնադրութեամբ Կեսարիոյ Ղեւոնդիոս Ցոյն հայրապետին։

Եկեղեցին արժանավայել կերպով կը պատուէ այս սրբազան Հայրապետը, միշտ իր աղօթքներուն և մաղթանքներուն մէջ զանիկա բարեխօս կը բռնէ, եւ տարին երեք անգամ ալ կը կատարէ անոր յիշատակը։

Մեծ պահքին վերջի շաբթուն կը կատարէ վիրապը ձգուելուն տօնը, ամառուան մէջ կը տօնէ վիրապէն ելլելուն յիշատակը և, անկէ տասն և հինգ օր յետոյ, մեծավայելուչ հանդէսներով

կը կատարէ անոր սուրբ նշխարներուն գիւտի տօնը։ Վասն զի այս հայրապետը Մանեայ այրին մէջ առանձնացած էր, թողլով իրեն յաջորդ իր որդին Արիստակէս, ու կը պարապէր ճգնութեան և շարունակական աղօթքի։ Մահուանէն վերջը՝ մարմինն անյայտ մնացած էր մարդիկներէ։ Եւ Աստուած, որ մարդոցմէ դաղտուկ եղած բաներն երեւան կը հանէ, հաճեցաւ այս մեծ սուրբին նշխարներուն տեղն ալ յայտնել ճգնաւորի մը, Գառնիկ անուն, որ գտաւ ծառի մը խոռոչին մէջ լուսափայլած, և մեծ պատիւով ու շքեղ հանդէսով, անհամար ժողովուրդներ անոր սքանչելագործ նշխարները տարին ամփոփել Թորդան աւանի մէջ, և անկէ Վաղարշապատ, ուր փառաւոր եկեղեցի մը շինել տուած էր Ս. Գրիգոր և անուանած Էջմիածին, որուն տօնն ալ յատուկ կը կատարէ Հայոց եկեղեցին։

Անոր աջ բազուկը կը գտնուի այժմ Ս. Էջմիածնի մէջ, եւ բոլոր եկեղեցիներ ունին Լուսաւորչի անունով յատուկ մասունք, որոնցմով բուժրշկութիւն կ'ընդունայ հաւատացեալ հիւանդներու։

Սուրբ Թարգմանիչներ

(ՍԱՀԱԿ ԵՒ ՄԵՍՐՈՊ)

Այս երկու մեծ Հայրապետները պատճառ եղան, հազար հինգ հարիւր տարիներէ աւելի առաջ, մեր ազգին այբուբէնը հնարելու։ Ահա՛ անոնց համառօտ պատմութիւնը։

Ս. Մեսրովպ, Հացեկաց անուն գեղէն, Մեծն Ներսէս Հայրապետի աշակերտն էր, արքունիքի ատենադպիր եղաւ, որովհետեւ լաւ գիտէր Յոյն, Պարսիկ և Ասորի լեզուները։ — Թողլով ամուսնական կեանքը՝ վանք մը մտաւ և շատ մը աշակերտներ ունեցաւ իր քով։ Նոյն ժամանակ Հայ ազգին հայրապետն էր Ս. Սահակ։

Մեսրովպ վարդապետ, թէեւ փափաք ունէր ժողովուրդին Աստուածաշունչ գիրք ուսուցանել, սակայն Հայերը մասնաւոր տառեր չունենալնուն և եկեղեցական ամեն արարողութիւններն Ասորի և Յոյն լեզուներով կատարուելուն համար, խորհեցաւ գիր հնարել և այս գեղեցիկ խորհուրդը յայտնեց Ս. Սահակին։

Ս. Մեսրովպ, աշակցութեամբ Հայրապետին, գնաց շատ մը քաղաքներ օժանդակութիւն գտնելու համար, ինչպէս նաև Ասորի Դանիէլ եպիսկոպոսին քով, որմէ կ'երեւի թէ բաւական օգտուեցաւ բաղաձայն գրերու մասին։ Սակայն

իր փափաքին կատարելապէս չհասնելով՝ ապաւինեցաւ Աստուծոյ շնորհքին, և տեսիլքին մէջ տեսաւ թաթ մը որ կը գրէր ձայնաւոր տառերը «Ա, Ե, Է, Ը, Ի, Ո, Ի, »։

Ս. Մեսրովպ մեծապէս ուրախացած՝ առաջին անգամ յունարէն լեզուէ հայերէնի թարգմանեց Սողոմոնի Առակներու գիրքը և ապա մեծ աշխատութեամբ Հին և Նոր Կտակարանը, Յովհան եւ Յովսէփ աշակերտներով, և այլն, և այնքան հրաշալի թարգմանեցին որ օտար ազգեր զքանչացած՝ «Թագուհի թարգմանութեանց» անուանեցին զայն։ Ա՛լ այնուհետեւ ամեն տեղ տարածուեցաւ Հայ լեզուի ուսումը դպրոցներու միջոցաւ։

Որչա՜փ պէտք է յարգենք ու սիրենք այս պատուական վարդապետները, որոնք Մովսէսներ եղան մեզի համար, վասն զի լուսոյ ջահեր վառեցին ամենուս սրտին ու մտքին մէջ։ Ս. Սահակի մարմինը կը հանգչի Աշտիշատի մէջ և Մեսրոպինը Օշական՝ փառաւոր մատուռներով։

Ս. Թարգմանիչներու օրը դպրոցական տօն է. ուստի երախտագիտական հանդէսներ պիտի կատարուին այն օրը, ի պատիւ անոնց սուրբ յիշատակին։

Սանդուխտ Կոյս եւ Թադէոս

Սանատրուկի դուստրն էր այս տասներկու տարեկան սրբուհի կոյսը՝ Սանդուխտ։ Թադէոս առաքեալին քրիստոնէական հաւատքը քարոզելովը դարձաւ հօրը հեթանոսական կրօնէն և հաւատաց Քրիստոսի։ Իր Սանատրուկ հօրը աղաչական և մերթ սպառնական ձայնը կարող չեղաւ զանիկայ խախտելու սուրբ հաւատքէն, և վերջապէս յանձն առաւ ամեն տանջանք ու բանտարկութիւն, և արժանի եղաւ վկայական մահուան՝ իր հօրը անգութ հրամանով դահիճի ձեռքով գլխատուելով։

Սրբուհին Սանդուխտ քրիստոնէական հաւատքի ճշմարտութիւնը իրեն արիւնով կնքեց, ուստի և, սքանչացած կուսական այս քաջասրտութեան վրայ, մեր երանաշնորհ հայրապետներէն մին գողտրիկ շարական մը յօրինած է։

Սանդուխտ վկայուհիին հետ կը տօնուի Թադէոս առաքեալ, որուն վրայ պիտի խօսինք յաջորդ դասով։

Թադէոս եւ Բարթուղիմէոս

Թադէոս, որ Ղէբէոս ալ կը կոչուի, տասներկուքներէն մին էր, որ Տիրոջ երկինք համբառնալէն յետոյ, Թովմաս առաքեալէն խրկուեցաւ

առ Աբգար Եդեսիա քաղաքի մէջ, և հոն հասնելով բժշկեց զնա իր ցաւերէն և մկրտեց. քաղաքը դարձուց հաւատքի եւ Ադդէ անուն մէկը եպիսկոպոս ձեռնադրեց։ Սա աշակերտեց սուրբ Ոսկեան քահանաներն, Սրբուհին Սանդուխտ և ուրիշ շատեր, ուստի եւ կոչուեցաւ առաքեալ և հոգեւոր հայր Հայաստանեայց. զոր ապա բռնելով Սանատրուկ՝ չարչարել տուաւ և հուսկ յետոյ անոր գլուխը սրով կտրեց. բայց հաւատացեալ քրիստոնեաներ անոր սուրբ մարմինը ամփոփեցին գերեզմանի մէջ։

Բարթուղիմէոս, որ Նաթանայէլ ալ կ'ըսուի, Քրիստոսի երկոտասան առաքեալներէն մին էր, որ Տիրոջ համբարձումէն վերջ, երբ իր ընկերները տիեզերքի ամեն կողմը ցրուեցան քարոզել, ինք գնաց Պարսից, Մարաց, Պարթևաց և այլ աշխարհներ. ապա Հայոց մէջ, եւ հոն Սանատրուկի քոյրն Ոգուհի դշխոյ անոր հաղարապետն և ուրիշներ դարձուց հաւատքի։

Հեթանոսներ զանիկայ բռնելով տանջեցին, մորթը աղիք ըրին. և ինքն եղաւ հայր և լուսաւորիչ մեր Հայաստանեայց եկեղեցւոյ։

Թադէոս և Բարթուղիմէոս Սրբազան առաքեալներն, որոնց յիշատակը պանծալի կերպով կը կատարուի, եղան մեր ազգին առաջին Լուսաւորիչները, վասն զի անոնք սերմանեցին Քրիստոնէական հաւատքին զօրաւոր սերմը, որմէ բողբոջեցաւ Ս. Գրիգոր՝ երկրորդ Լուսաւորիչը։

ԱՌԱՔ ՏՕՆԵՐ

Դաւիթ մարգարէ եւ Յակոբ առաքեալ

Դաւիթ, որ թագաւոր և միանգամայն մարգարէ կը կոչուի, Յուդայի ազգէն Բեթղէհէմացի Յեսսէի կրտսեր որդին էր։ Աստուած ընտրեց այս պատանին, որ փեսայացաւ Սաւուղի, և յետոյ անոր յաջորդ կարգեց բոլոր Իսրայէլի վրայ և խոստացաւ անոր՝ երդմամբ՝ որդին նստեցնել իր թագաւորական աթոռին վրայ։ Դաւիթ, թէ՛ իբր մարգարէ եւ թէ՛ իբր թագաւոր, եբրայական ազգին մէջ նշանաւոր և Աստուծոյ սիրելի դարձաւ, անոր սերունդէն խոստացաւ Աստուած տալ տիեզերքի փրկիչը. ասոր համար Աստուածահայր ալ կը կոչուի։ Այս մեծ մարգարէին կենսագրութիւնը ընդարձակօրէն կրնանք կարդալ Ս. Գրքի պատմութեան մէջ։

Յակոբոս՝ փոքր եւ արդար անուանեալ՝ Քրիստոսի տասներկու առաքեալներէն էր. որդի էր Ալփեայ, վանորայ կը կոչուի Յակոբոս Ալփեայ. և որովհետեւ որդի էր նաեւ Ս. Կոյս Մարիամի ազգական կնոջ մը՝ ուստի եւ կ'ըսուի եղբայր Տեառն։

Այս տօնին երգուած շարականն է « Յաղթող դտաւ » և այլն։ Աւագ տօներուն կ'երգուի նաեւ « Այսօր դասք հրեշտակաց » ը այնքան յուզիչ շեշտերով և հոգեզմայլ եղանակով։

Ս. Ստեփանոս նախասարկաւագ

Սուրբ Ստեփանոս առաջինն եւ նախապատիւ եօթն սարկաւագներէն՝ իրեն սքանչելագործութեամբ և քարոզութեամբ՝ աներկիւղ կը յանդիմանէր հրեաներուն խստասրտութիւնը, որուն համար ատեան կոչուեցաւ և դատապարտուեցաւ քարկոծուելու։

Իր տանջանքին մէջ կ'աղօթէր իրեն վրայ քար ձգողներուն և սպանողներուն համար և մահուան ժամուն տեսաւ զՔրիստոս հայրենական փառքին մէջ բաղմած։

Ստեփանոս կոչուեցաւ առաջին մարտիրոս և նախասարկաւագ քրիստոնէական եկեղեցւոյ։ Ս. Ստեփանոսի շարականը, « Նահատակ բարի » որքա՜ն վսեմ կերպով շարադրած է մեր Յովհան Իմաստասէր Օձնեցի կաթուղիկոսը։ Այս պատուական հայրապետին կ'ընծայուին նաեւ միւս աւագ տօներու հմտալից շարականները։

Պետրոս եւ Պօղոս

Քրիստոսի տասներկու առաքեալներէն էր Պետրոս, որ յունարէն վէմ կը թարգմանուի. եղբայր էր Անդրէասի. ունէր ջերմ սէր մը Յիսուսի վրայ և որչափ որ իր Տէրն ուրացաւ մատ-

նութեան դիշերը, սակայն յարութենէ վերջը պաշտօն ունեցաւ Քրիստոսի հօտը՝ այսինքն ժողովուրդը՝ արածելու, և իրաւամբ շատ մեծ դեր մը կատարեց, անհամար հեթանոսներ դարձուց հաւատքի, և Յիսուսի անունով շատ հրաշագործութիւններ ըրաւ։

Այլ և այլ տեղեր Աւետարանը քարոզելէ և բանտարկուելէ վերջը, կ'ըսեն թէ, Հռովմ Ներոն կայսրէն տանջանքի մատնուելով գլխիվայր խաչուեցաւ։

Պօղոս՝ (նախ Սաւուղ կամ Սօղոս) փարիսեցի երիտասարդը, որ սաստիկ հակառակորդ էր քրիստոնեաներուն, զանոնք շղթայակապ ընելով՝ կը տանէր քահանայապետին։ Սակայն անգամ մը, Դամասկոսի ճամբուն վրայ, սքանչելի լոյս մը տեսնելով և Տիրոջ կամքով Դամասկոսի մէջ Անանիա անուն աշակերտէ մը մկրտուելով՝ գործունեայ առաքեալ մը դարձաւ, քարոզեց հեթանոսներուն և կոչուեցաւ « Հեթանոսներու Առաքեալ »։

Պօղոս առաքեալ Քրիստոսի հաւատալով, ամեն կերպով պատրաստ գտնուեցաւ Աւետարանը քարոզելու։ Եւ ո՞վ կրնայ պատմել ինչ որ ըրաւ։ Իր ուղեւորութիւնները, քարոզութիւնները, անցքերն ու վիշտերն ընդարձակօրէն կրնանք կարդալ « Գործք Առաքելոցի » մէջ։ Զանազան եկեղեցիներու գրած թուղթերը, որոնցմէ կը կարդացուին եկեղեցւոյ մէջ, իրենց գրուածքին

ու իմաստին կողմանէ շատ վսեմ են։

Իբր 62 թուականին, Պօղոս առաքեալ Հռովմ տարուելով՝ հոն ալ չէր դադրեր իր աշակերտներն հրահանգելէ, և ստէպ կը գրէր անոնց՝ որ զանազան քաղաքներու մէջ իրեն քարոզութիւններովը հաւատացած էին Տէր Յիսուսի։

Իր բանտարկութեան միջոցին գրեց Գաղատացիներուն, Եփեսացիներուն, Կողոսացիներուն, ինչպէս նաև Տիմոթէոս, Տիտոս և Փիլիմոն աշակերտներուն և Եբրայեցիներուն թուղթեր գրեց։

Կ'աւանդուի թէ այս բազմավաստակ Առաքեալը՝ Ներոն կայսրին հալածանքին ժամանակ, գլխատուեցաւ Հռովմէ դուրս բարձր տեղ մը, որ կը կոչուի Սաղուեան ջուրեր, բայց մարմինը Լուկինա անուն բարեպաշտ կին մը թաղել տուաւ իր ագարակին մէջ, Ոստիա քաղաքը։(¹)

Որդի Որոտման

[ՅԱԿՈԲՈՍ ԵՒ ՅՈՎՀԱՆՆԷՍ]

Այս երջանիկ առաքեալներն Յիսուսի շատ սիրելի էին։ Անոնք, երկու եղբայրներ, որդի էին Զեբեթոսի, մայրերնին՝ Սողոմէ՝ խնդրեց Յիսուսէ

(¹) Աւելորդ չէ ըսել որ լաւ կ'ընեն Կրօնի Ուսուցիչք, եթէ այս յոգնաչան Առաքեալի կեանքն ու գործունէութիւնը ուսումնասիրել տան աշակերտներուն՝ Գործք-Առաքելոցին պատմած կերպով։

որ իր երկու որդիներն արքայութեան մէջ նըստին՝ Անոր աջ ու ձախ կողմերը։ Ականատես եղան Յիսուսի պայծառակերպութեան, Թափօր լեռին վրայ, և կոչուեցան Բաներիգես, այսինքն Որդիք որոտման։

Յակոբոս առաքեալ քարոզելով Հրեաներուն՝ սրով նահատակուեցաւ Երուսաղէմ, հրամանաւ Հերովդէսի, և առաջին մարտիրոսն եղաւ առաքեալներուն մէջ։

Իսկ Յովհաննէս առաքեալ, որ աւետարանիչ էր միանգամայն, աստուածաբան անուանեալ կը կրէ. Յիսուսի յոյժ սիրելին էր։ Պատմոս կղզին մէջ, ուր աքսորուած էր, գրեց Աւետարանն ու Յայտնութեան գիրքը՝ յունարէն լեզուով՝ Յիսուսի համբարձումէն յիսուն և չորս տարի ետքը։ Գրած է նոյնպէս Ընդհանրական և մէկ մասնաւոր թուղթեր։

Հարիւր տարեկան հասակի մէջ վախճանեցաւ Յովհաննէս, իր ներկայութեան իսկ բրել տալով գերեզմանն՝ իր աշակերտներուն ձեռքով։

Հայոց Եկեղեցին տօնելով ասոնց յիշատակն՝ կը կարդայ նաև նոյն առաւօտուն « Հանգիստ Յովհաննու առաքելոյն » կոչուած գրութիւնը։

Մեծ-Պահք

Էր ժամանակ մը որ Հայ-քրիստոնեայ ժողովուրդը Մեծ Պահքի օրերուն մէջ խստակրօն կենցաղ վարելով՝ աղ ու հաց կը ճաշակէր. ասոր համար այս օրերը կը կոչուին նաև աղուհացից օրեր։ Մեծ Պահքն օրինակ է Քրիստոսի քառասնորդական պահքին և փորձութեանց, և նախաժնողներուն դրախտէն արտաքսուելուն, ուստի և պահքով ու ժոմով ապաշխարութեան կը հրաւիրէ Աստուած իր ժողովուրդը։

Մտնենք եկեղեցին. ամեն ինչ սեւ ու մելամաղձիկ կը գտնենք հոն, վարագոյրները գոցուած են, կը տեսնենք Քրիստոսը որ՝ խաչն ուսը առած՝ մեզ իրեն կը հրաւիրէ. պէտք է ապաքէն յիշենք անոր կրած ամեն չարչարանքներն և խնդրենք իր անչափ գթութիւնը. մտիկ ընենք մանաւանդ այն քարոզները, պատուէրներն ու բարոյալից առակները, զորոնք Յիսուս խօսած է և ամենէն վսեմ և սրտագրաւ կտորներն են սուրբ Աւետարանի։

Իւրաքանչիւր կէս օր՝ ժոմի զանգակահարութիւն կը լսենի, ապաշխարութեան ժամ է, աղօթք ընելու ժամանակ է։ — Մանաւանդ ի՜նչ անուշ և սրտառուչ են արեւագալի երգերը։ Յարեւելից — Ճգնաւորք — Լոյս և Ճանապարհ, զորոնք շարադրած է մեր հայրապետներէն մին՝ Եղը. և երեկոյեան խաղաղականի ժամուն հոգեշունչ եւ

նուիրական աղօթքներն ու մաղթանքները, ինչպէս՝ «Նայեա՛ց սիրով — ի քէն հայցեմք — Հաւատով խոստովանիմ». Աղուհացից կիրակիներու շարականներն և այլ ընտիր գոհաբանական աղօթքները, զորս երկնած ու երգած է յաւիտենական յիշատակի արժանի Ներսէս Կլայեցի՝ որ և Շնորհալի՝ Ս. Հայրապետը,

Որքա՜ն լաւ է որ, ամեն ժողովուրդ այս քառասնորդական օրերու մէջ պահք բռնէ, ծոմ պահէ, ընտանեօք տունը «Եկեսցէ» կատարէ, նահապետական սովորութիւններու համեմատ, իր անձը առաքինական գործերով պատրաստէ Մարմնոյ եւ Արեան, և հոգեկեցոյց Յարութեան Տեառն։

ԽՈՐՀՈՒՐԴՔ ԵԿԵՂԵՑՒՈՅ

ԿԱՄ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Մկրտութիւն եւ Դրոշմ

Մկրտութեան սուրբ Խորհուրդն հաստատեց Քրիստոս. երբ Յարութենէ վերջ ղրկեց Առաքեալները՝ բոլոր աշխարհ Աւետարանը քարոզել, ըսաւ. «Մկրտեցէք զնոսա, յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ»։ Մկրտութիւնը անհրա-

ժեշտ է ամեն անոնց՝ որ կ'ընդունին քրիստոնէութիւնը։

Մկրտութիւնը երեք տեսակ է։ — Արեւելեան կամ Հայ եկեղեցին իր երախան կը մկրտէ ընկղմամբ, իբրև օրինակ երեքօրեայ թաղման եւ Յարութեան Յիսուսի. մկրտութեամբ Ս. Միւռոնի դրոշմը կ'ընդունի երախան իր հինգ զգայարանքներուն և կարևոր անդամներուն վրայ, և մկրտեալին կեանքի մաքրութեան և բարոյականի զարգացումին կարևոր հոգը կրստանձնէ կնքահայրը։

Արևմտեան կամ Պապական եկեղեցին կը մըկըրտէ հեղմամբ, իբրեւ նշան Քրիստոսի մկրտութեան Յորդանանու գետին մէջ Յովհաննէս Մըկըրտիչէն։ Իսկ Բողոքական եկեղեցին, քանի մը յարանուանութիւններէ զատ, իր չափահաս երախան կը մկրտէ սրսկմամբ, նշանակ Ս. Հոգիին իջնելուն։

Այս խորհուրդին մէջ օրինաւոր պաշտօնեան է քահանան, մեղքը սրբելու արտաքին նշանն է ջուրը, և աղօթքն է «Մկրտեմ զքեզ յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ»։

Նախնի դարերու մէջ, անոնք որ մկրտուած չէին, Ս. Խորհուրդին՝ այսինքն Ս. Հաղորդութեան չպիտի մօտենային, այլ միայն ներկայ կը գտնուէին պատարագի առաջին մասին, որ կը կոչուէր Երախայից Պատարագ։ Երախայ անունը, որ չ մկրտուած՝ (կրօնի մէջ մանուկ)՝ կը նշանակէ,

կը տրուէր այն բոլոր քրիստոնեաներուն, որոնք նորեկ էին, հաւատքի վարդապետութիւններն ու դաւանութիւններն՝ Հայր մեր, Հաւատամք, Փառք ի բարձունս, և այլն ուսանելու պէտք ունէին. ուստի և՝ երբ Սարկաւագը կը ձայնէր. « Մի՛ ոք յերախայից, մի՛ ոք ի թերահաւատից և մի՛ ոք յապաշխարողաց և յանմաքրից մերձեսցի յաստուածային խորհուրդ », անոնք կ'երթային եկեղեցիին-գաւիթները, որոնք այն ժամանակ ընդարձակ կը շինուէին, և հոն կ'աղօթէին Աստուծմէ շնորհք հայցելով։

Հաւատացեալները, մկրտութենէ վերջ, Ս. Հոգիին դրօշմը կ'առնէին (Գործք. Ը. 17. ԺԸ. 5). այսպիսի սրբութենէ յետոյ՝ Սուրբ կ'անուանուէին իբրեւ նշան հեթանոսներէն որոշուելու։

Ապաշխարութիւն

Հայոց Ս. Եկեղեցիին վարդապետութեան համեմատ, երբ ապաշխարողը քահանային առջև կը խոստովանի իր մեղքերը, « Մեղայ Ամենասուրբ Երրորդութեան » ով զղջումը կը յայտնէ, քահանան՝ իբրեւ միջնորդ Աստուծոյ և մարդուն՝ իր կարգովը արձակում կուտայ « Ողորմեսցի » աղօթքով, և յորդորակներէ՝ վերջ կարողութիւն կը մաղթէ որ արժանի ըլլայ հաղորդ ըլլալու Յիսուսի Մարմինին և Արիւնին։

Կանուխէն, խոստովանութիւնը երկու տեսակ էր.—թերթեւ յանցանքներու համար յունկանե, իսկ ծանր յանցանքներու համար հրապարակային։ Ծանր յանցաւորները սուգի զգեստով եպիսկոպոսին առջեւը կուգային. և իրենց գլուխին վրայ մոխիր ցանելէ վերջ, ապաշխարողներու չորս հետեւեալ կարգերէն կ'անցնէին.

1. Հեծեծողներ՝ որ եկեղեցիին գաւիթին մէջ կեցած՝ աղօթք կ'ընէին. 2. Ունկնդիրներ որ եկեղեցիի դուռին քով կրնային կենալ և քարոզ մը տիկ ընել։ 3. Գեսնամածներ, որ ծունկի վրայ եկած՝ աղօթքի ներկայ կը լինէին, բայց « Մի՛ ոք յերախայից » ի ատեն դուրս կ'ելլէին։ 4. Կանգուն կեցողներ, որ ոտքի կանգնած պատարագ կը տեսնէին, բայց չէին կարող հաղորդուիլ։

Ս. Հաղորդութիւն

Հաղորդութեան Ս. խորհուրդն հաստատեց Քրիստոս վերնատան մէջ, Աւագ Հինգշաբթի օրը։ Երբ աշակերտները սեղան նստած էին, Յիսուս օրհնեց հացն և անոնց տուաւ ըսելով. « Առէ՛ք, կերա՛ք. այս է մարմին իմ ». յետոյ օրհնեց գինին ըսելով՝ « Արբէ՛ք ի սմանէ ամենեքեան. այդ է արիւն իմ նորոյ ուխտի »։

Հաղորդութիւնը անխմոր հաց և անապակ

գինի է, բայց Ս. Պատարագի մէջ քահանային աղօթքով (Որդի Աստուծոյ և Հոգի Աստուծոյ աղօթքներու առեն), նշխարն ու գինին կը փոխարկուին «ի Մարմին և յԱրիւն Որդւոյն Աստուծոյ» և կը տրուին արժանաւորութեամբ մատեցողներուն։ Իւրաքանչիւր քրիստոնեայի պարտաւորութիւնն է տարին հինգ տաղաւարներուն, կամ գոնէ Ս. Ծնունդին և Ս. Զատկին ճաշակ առնել, նախապէս իր անձը սրբութեամբ պատրաստելով։

Նախնի հաւատացեալներն երբ կը հաղորդուէին, ձեռքերնին խաչաձեւ եւ իրարու վրայ դրուած կը մատենային Ս. Խորհուրդին և Պատարագիչ քահանան անոնց ոչ ձեռքին մէջ կը դնէր Ս. Մարմինէն, և կիները կամ կոյս աղջիկները, որոնք այր մարդիկներէ վերջը կուգային հաղորդուելու, ձեռքերնուն վրայ սպիտակ պաստառ կամ շղարշ ունենալով կը մերձենային. — Սուրբ արիւնէն ալ կա՛մ Սկիհը բերաններին դնելով կը խմցնէին ամեն հաղորդուողներուն, և կա՛մ դգալով կուտային. բայց վերջը, մարմինը արիւնին հետ թաթաւելով կուտային հաւատացեալին բերանը, ինչպէս կ'ընէ այժմ Հայ եկեղեցին։

Բարեպաշտ հաւատացեալներն հաղորդութենէ ետքը կը կատարէին աղքատաց կերակուր տալու սովորութիւնը, զոր կը կոչէին Սէր կամ Ագապ։

Ամուսնութիւն

Ամուսնութիւնը կամ պսակը փեսային և հարսին մէջ եղած միութիւնն է՝ Աստուածային օրհնութեամբ և քահանային աղօթքով։ Պսակն՝ ինչպէս հին ժամանակ նոյնպէս եւ այժմ՝ քրիստոնեաներուն համար անլուծանելի է, միայն ամուսիններուն մէկուն մահով լուծուած կը համարուի. այս պարագային մէջ աղատ է այրը կամ կինը ամուսնանալ որո՛ւ հետ որ ուզէ։ Ամուսնութիւնը օրինակ է Քրիստոսի հոգեւոր միաւորութեան եկեղեցիին հետ։ Պսակի իմաստալից աղօթքներն ու օրհնութիւնները գրած է Յովհան Մանդակունի շնորհազարդ հայրապետը։

Ձեռնադրութիւն

Սուրբ Հոգիին գալուստէն վերջ, երբ Առաքեալներն այլ և այլ գաւառներ ցրուեցան քարոզութեան համար, իրենց յաջորդներ կը դնէին հաւատացեալներն հրահանգելու եւ խորհուրդները մատակարարելու համար։ Անոնք եպիսկոպոս կամ տեսուչ անուանը առին՝ որոնք, իրեւ յաջորդ առաքեալներու, կը կառավարէին եկեղեցին և հրահանգ կը ստանային անոնցմէ՝ մասնաւոր թուղթերով։

Առաքեալներն այս ընտրութիւնը ձեռնադրութեամբ՝ այսինքն ձեռք դնելով՝ և աղօթելով կը կատարէին, և կը խրկէին ձեռնադրուածները զանազան քաղաքներ՝ քարոզելու համար։ Այսպէս, Յովհաննէս Աւետարանիչն Եպիսկոպոս ձեռնադրեց Զմիւռնիայի համար Ս. Պողիկարպոս և Անտիոքի համար՝ Ս. Իգնատիոս Աստուածազգեաց։ Պօղոս առաքեալ նմանապէս իր երկու աշակերտները, Տիտոսն ու Տիմոթէոսը, ձեռնադրեց։

Եպիսկոպոսներն ալ, առաքեալներու կողմանէ ընդունած շնորհքին եւ իշխանութեան համեմատ, եկեղեցիին ծառայելու արժանաւոր ընծայացուները կը ձեռնադրեն կամ կարգ կուտան անոնց։

Խորհուրդ Հիւանդաց

Կանուխէն, եկեղեցիին սովորութիւնն էր հիւանդին բժշկութեան և մխիթարութեան համար օծանել իւղով, ինչպէս մինչեւ հիմայ կ'ընէ պապական եկեղեցին. բայց, ի՛նչ ի՛նչ պատճառներով, Հայոց եկեղեցին ջնջեց հիւանդներն օծելու դրութիւնը և պատշաճ համարեց միայն բժշկութեան Աւետարան կարդալ և հոգեւորապէս մխիթարել։ Յակոբոս առաքեալ իր թուղթին մէջ կը գրէ. « Եթէ ձենէ մէկն հիւանդ է,

թող կոչէ եկեղեցիին երէցները որ աղօթեն անոր վրայ, և իւղով օծեն տիրոջ անունով. և աղօթքը, որ հաւատով է, պիտի փրկէ հիւանդը և Տէրը պիտի կանգնէ զնա » (Թուղթ Յակոբու Ե. Գլ. 14)։ Հայաստանեայց եկեղեցին, հետեւած ընթացքին համար նախնի սովորութեան, եկեղեցականները կ'օծէ մասնաւոր արարողութեամբ՝ անոնց մահէն վերջը։

Մեր հայրապետներէն մին՝ խօսելով վերջին օծման վրայ՝ ըսած է, « Հիւանդին բժշկութիւն տուողը իւղը չէ, այլ տիրոջ անունը։ »

Եկեղեցիի կարգեր

Եկեղեցիի կարգերը կամ կղերական աստիճաններն երկուքի կը բաժնուին. Փոքր եւ Մեծ։ Այս կարգերու պէտքը տակաւ զգալի եղաւ երբ եկեղեցին օրինաւոր կազմակերպութիւն ունեցաւ։ Փոքր աստիճաններն են՝

Դռնապանութիւն. — Այս պաշտօնը՝ ինչպէս անունէն յայտնի կ'երեւի, էր եկեղեցին պահպանել պէտք եղած գործերը կատարելով։

Դպրութիւն. — Դպիրները հաւատացեալներու ժողովին մէջ պաշտօն ունէին Ս. Գիրքէն հատուածներ կարդալ, ուստի և կը կոչուէին գրակարդացներ։ Հիմա ալ ունի եկեղեցին դպիրներ, որոնք եղանակաւոր շարականներ և աղօթք-

ներ կ'երգեն, կը սաղմոսեն, եւ եկեղեցական պաշտամունքի մէկ կարեւոր մասը կը կատարեն։

Ջահրնկալութիւն. — Ջահրնկալներուն պաշտօնն էր եկեղեցիին լուսաղարդութեան հսկել, ջահերն ու կանթեղները մաքուր պահել և վառել։

Երդմնեցուցչութիւն. — Մասնաւոր իշխանութիւն ունէին դիւահարներու և լուսնոտներու վրայ ձեռք դնելով աղօթելու։

Մեծ կամ սուրբ աստիճաններն են.

Կիսասարկաւագութիւն. — Եպիսկոպոսները տեսնելով որ Սարկաւագներն իրենց յանձնուած պաշտօնը չպիտի կրնան կատարեալ կերպով ի գործ դնել՝ ընտրեցին կիսասարկաւագներ, որոնք աղատ ըլլալով ամուսնանալու, որոշեալ ժամանակին իրենց պաշտօնին գլուխը կ'անցնէին։

Սարկաւագութիւն. — Սարկաւագ բառը կը նշանակէ գործակից, օգնական, ծառայ և այլն. ի հնումն, Սարկաւագներու պաշտօնն էր բարեպաշտ ժողովուրդին տուրքը կարօտեալներուն բաշխել. աղքատներուն, որբերուն և այրիներուն պաշտպան ըլլալ։ — Սարկաւագը՝ եպիսկոպոսին կամ քահանային իշխանութեան տակ՝ կը մասնակցի ժամերգութեան. կանուխէն Մկրտութեան խորհուրդն ևս կը կատարէին։ Առաքեալներուն ժամանակ, կային Սարկաւագներ որոնք հաւատացեալ յոյն հասարակութեան խնդրանօք ձեռնադրուեցան և հետեւեալներն են.

1. — Ստեփաննոս, որ Ս. Հոգիով լի մարդ

մ'էր. 2. — Փիլիպպոս. 3. — Պրոկորոն. 4. — Նիկանովրա. 5. — Տիմոնա. 6. — Պարմենա. 7. — Նիկողայոս՝ նորեկն Անտիոքացի։

Առաքեալներուն ժամանակ կային նմանապէս կին սարկաւագներ կամ սարկաւագուհիներ, որոնք հիւանդներն ու այրիները կը խնամէին։ Մեր եկեղեցին կանուխէն դադրեցուց կիներու պաշտօնը, բայց Պապական եկեղեցին ունի մինչեւ հիմայ սարկաւագուհի ընտրելու սովորութիւնը, և մեզի ծանօթ են մայրապետ անունով։

Քահանայութիւն. — Քահանան, իբրև ամենուն հայր և խնամող, ամուսնացեալ պաշտօնեայ մ'է. իր մաքուր բարոյականով և գիտութեամբ կարող կ'ըլլայ իր հօտը կառավարել։ Ձեռնադրութեան խորհուրդէն զատ, եկեղեցիին ամեն խորհուրդները կը մատակարարէ, ժողովուրդը կը խնամէ և արժանաւորապէս կը ծառայէ Աստուծոյ և Ս. Եկեղեցիին։ Քահանան ընդհանուր ժողովուրդին կողմանէ կ'ընտրուի, և եպիսկոպոսը զայն կը ձեռնադրէ օծելով։

Վարդապետութիւն. — Վարդապետը մասնաւոր աստիճան մը չունի, այլ կուսակրօն՝ այսինքն ամուրի քահանայ է. եպիսկոպոսներուն նման վեղար կը դնէ, իբրև նշան կրօնաւորութեան և. կը կոչուի Աբեղայ։ Երբ ձեռնադրող եպիսկոպոսը գաւազանի իշխանութիւն տայ, ա՛լ այնուհետեւ արտօնեալ է եկեղեցիին առեանը քարոզել Աստուծոյ խօսքը, և է վարդապետ։ Մասնաւոր աս-

տիճան մ'ալ եպիսկոպոսը կուտայ արժանաւորներուն, որք կը կոչուին ծայրագոյն վարդապետ։

Եպիսկոպոսութիւն. — Աստիճաններուն ամենէն բարձրն է այս, վասն զի թէ՛ փոքր և թէ՛ մեծ կարգերն եպիսկոպոսը կուտայ. կը ձեռնադրուի Կաթուղիկոսէն. պետ և հսկող է եկեղեցիին, հոգեւոր հայր Քրիստոսի հօտին և քարոզիչ առաքելական վարդապետութիւններուն։ — Բարձրաստիճան եպիսկոպոսներ մասնաւոր տիտղոսով կը կոչուին Արհի-եպիսկոպոս կամ Արք-եպիսկոպոս՝ Կաթուղիկոսէն խրկուած օրհնութեան կոնդակով մը։

Նախնական Եկեղեցին

Եկեղեցին այն նուիրական ժողովարանն է, ուր հաւատացեալները կ'աղօթեն առ Աստուած կրօնական արարողութեամբ և պաշտամունքով։

Նախնի քրիստոնեաները ժամերգութիւնը գաղտնի կը կատարէին՝ սովորաբար առաւօտուն ճաշի ատեն և երեկոյին։ Փառաւոր տաճարներ չունէին, ուստի կը ժողովուէին քրիստոնեաներու տունները, ու միայն ա՛յն տեղերը կ'ըլլային աղօթարաններ, ուր սուրբի կամ նահատակի մը մարմինը ամփոփուած կար, կամ մաս մը նշխար։ Տեղ տեղ գերեզմանական քարերու վրայ ինսիս կը գրուէր,

որ յունարէն կը նշանակէ ձուկ։ Ինթիսի սկզբնագրերը կը նշանակեն « Յիսուս, Քրիստոս, Աստուծոյ Որդի, Փրկիչ։ » (Խորհրդանշանն ալ այս էր. ինչպէս որ ձուկը կը ծնանի և կ'ապրի ջուրի մէջ, այնպէս ալ քրիստոնեաները կը ծնանին ջուրէն ու հոն կը թաղուին Քրիստոսի հետ՝ մկրտութեամբ)։

Երբ հալածանքները քրիստոնեայ թագաւորներու շնորհիւ դադրեցան, ամեն տեղ կռապաշտութեան փոխան քրիստոնէութիւնը տարածուեցաւ, շինուեցան գեղեցիկ եկեղեցիներ և հաւատացեալներն սկսան ազատօրէն պաշտել Քրիստոս։ Եկեղեցական հովիւներ՝ համարձակ քարոզեցին, եւ կարգերն ու կանոնները օր ըստ օրէ աւելցան։

Եկեղեցիին մէջ

Երբ եկեղեցի կը մտնեմ, կը տեսնեմ Աւետարան, խաչ և Քրիստոսի, Աստուածածնի և ուրիշ Սուրբերու պատկերներ։

Աւետարանին մէջ Յիսուսի կեանքին պատմութիւնը, հրաշքներն ու քարոզները գրուած են. ուստի Աւետարանը՝ իբրև Աստուծոյ Որդիին-Քրիստոսի խօսքերը, իբրև Սուրբ Գիրք մը կը յարգեմ։ Խաչը մեր փրկութեան գործիքն է, որուն

վրայ Յիսուս թափեց իր սուրբ արիւնը. ուրեմն խաչն ալ կը յարգեմ ու կը մեծարեմ։ Սուրբերէն շատերուն պատկերները, որ կախուած են եկեղեցիին մէջ, մեր աչքին առջեւ կը բերեն իրենց քաշած շատ մը տանջանքներն ու նահատակութիւնը՝ Քրիստոսի և եկեղեցիին համար. ապաքէն այդ երանեալ սուրբերուն ալ յարգանք կը պարտինք, վասն զի մեր եկեղեցիին հաւատքն է թէ՝ անոնց հոգիներն երկինքի մէջ կ'աղօթեն մեզի համար։ Իսկ մի միայն Յիսուս Քրիստոս, Աստուծոյ որդին կը պաշտենք, և կ'երկրպագենք անոր։

Ս. Եկեղեցիին արարողութիւնները, տօները, աղօթքները և ուրիշ գործերը կանոնաւորութեամբ և ըստ պատշաճի կատարելու համար, մեր Ս. Հայրապետները հոգ տարեր են։ Սաղմոս, Տօնացոյց, Մաշտոց, Ժամագիրք, Շարական, Ճաշոց և ուրիշ գրքեր իրենց պաշտօններն ունին։

Եկեղեցիներ

Քրիստոսի հիմնած կրօնը, որ վեհ և բարձր կրօն մ'է և կը կոչուի Քրիստոնէութիւն, բաժնուած է երեք եկեղեցիներու, որոնք են Արևելեան եկեղեցի, Արեւմտեան եկեղեցի և Բողոքականութիւն.

Արեւելեան կը կոչուի այն նախկին եկեղեցին, զոր Քրիստոս հիմնեց Երուսաղէմի մէջ Առաքեալներուն ձեռքով, որոնք յետոյ տարածեցին Հայերուն մէջ, Յունաստան, Եգիպտոս, Փոքր-Ասիա և ուրիշ տեղեր։ Արեւելեան եկեղեցիները, գլխաւորաբար Հայ և Յոյն, թէև աղդով ու ծէսով իրարմէ կը տարբերին, բայց ունին մի և նոյն աստուածային Գլուխը, որ է Յիսուս Քրիստոս։

Հայոց եկեղեցին հեթանոսներուն մէջ անդրանիկն եղաւ. Թադէոս եւ Բարթուղիմէոս առաքեալները կազմակերպեցին զանի. ուստի Առաքելական է։ Յետոյ, Ս. Գրիգոր Լուսաւորիչ և անոր յաջորդները քրիստոնէական հաւատքին փրկարար վարդապետութիւնը ամեն տեղ տարածեցին քարոզելով և եկեղեցիներ շինելով։

Արեւմտեան եկեղեցին այն է որ հիմնուեցաւ Հռովմի մէջ և յետոյ տարածուեցաւ Եւրոպա, Ափրիկէ և ուրիշ տեղեր։ — Այս եկեղեցին իրեն հոգեւոր գլուխ կ'ընդունի Պապը, որուն համար «Պապական» անունն ալ կը կրէ. կը ճանչնայ միանգամայն Պապը իբրեւ յաջորդ Պետրոս առաքեալին։

Բողոքականութիւնը Պապական եկեղեցիէն բաժնուած է։ Լուտեր անունով մէկը, որ աստուածաբան կրօնաւոր մ'էր, հակառակեցաւ, մեծ վիճաբանութիւններ մղեց Պապական եկեղեցիին դէմ։ Եւրոպական տէրութեանց միջոցաւ կազմեց

առանձին քրիստոնեայ տարբ մը՝ բողոքական կամ բroթեսթան անունին տակ։

Մարտինոս Լուտեր թէեւ լաւ դաղափարով մը սկսաւ, բայց ինքն ալ հակասութեան մէջ ինկաւ։ Եկեղեցիին խորհուրդներէն Մկրտութիւնը և Ս. Հաղորդութիւնը միայն ընդունեցաւ, մերժեց բոլոր առաքելական արարողութիւնները, Եայլն, և այսօր բողոքականութիւնը, անհամաձայն իր մէջ, բաժնուած է շատ մը յարանուանութեանց։

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Հայոց Կաթուղիկոսութիւնը կը սկսի Թադէոս և Բարթուղիմէոս առաքեալներէն և անոնց աթոռին յաջորդն եղող Ս. Գրիգոր Լուսաւորիչէն, որ ձեռնադրուեցաւ Կեսարիոյ Ղևոնդիոս Եպիսկոպոսէն. սա ևս յաջորդն էր Թադէոս առաքեալին։

Ընդհանուր Հայ Ազգին Կաթուղիկոսը կամ Հայրապետը կը նստի Ս. Էջմիածնի մէջ։ Անոր հայրապետական իշխանութեան տակ են բոլոր Հայ եկեղեցիներ և հոգեւոր պաշտօնեաներ։

Ժամանակով, կաթուղիկոսական աթոռը շատ տեղեր փոխադրուեցաւ. վերջը ուզեցին նորէն Էջմիածին հաստատել և արդէն մէկտեղ տարած էին Ս. Լուսաւորչի աջը. — Երբ 1441 թուա-

կանին այս որոշումը տուին, հրաւիրեցին նոյն ատենի Կաթուղիկոսը, Գրիգոր Թ. Մուսաբէկեանց՝ Սիսէն ելլել և Էջմիածին նստիլ. բայց նա ժողովին վճռոյն չ'անսաց. ուստի անոր տեղը Վիրապեցի Կիրակոս եպիսկոպոսն ընտրեցին հայրապետ ամենայն Հայոց՝ Ս. Էջմիածնի մէջ։

Կիլիկիա

Կիլիկիայի կամ Սիսի Կաթուղիկոսութիւնը կը սկսի Մուսաբէկեանց եպիսկոպոսէն, 1441։ Անոր մահուանէ վերջ յաջորդ ընտրեցին, Սիսի մէջ, Կարապետ եպիսկոպոսը։ Այսպէս, յաջորդաբար Կիլիկեցիներն ունեցան իրենց համար Կաթուղիկոսներ։ Հայոց ազգը զայն կը ճանչէ լոկ Կաթուղիկոս Սիսի կամ «Տանն Կիլիկիոյ». անոր իշխանութիւնը մասնական է, և ինքը հպատակ է Մայր-Աթոռին իրաւասութեան։

Աղթամար

Թոռնիկեան Դաւիթ եպիսկոպոս, 1114 թուին, կ'օծուի Կաթուղիկոս Աղթամարի մէջ, որ Վանի ծովուն մէջ կղզի մէ։ Յաջորդաբար մինչեւ այսօր կ'ընտրուին Կաթուղիկոսներ։ Այս Աղթամարի, ինչպէս և Կիլիկիայի Կաթուղիկոսները Պատրիարքութիւններ են՝ Կ. Պոլսոյ Պատրիարքութեան նման՝ Էջմիածնի Մայր-Աթոռին հովանիին տակ։

Պատրիարքութիւն Երուսաղէմի

Ս. Երուսաղէմի մէջ, կանուխ ժամանակներէ սկսեալ, շատ մը ուխտաւորներ կային, ուր կ'երթային հայերն այցելել. հոն, առաջին անգամ, եպիսկոպոս նստած է Յակոբոս առաքեալը։ ԺԴ. դարուն, 1311 թուականին, Պատրիարք դրին Սարգիս եպիսկոպոսը, որ ինքն իսկ առած էր հրովարտակն Իգիպտոսի Սուլթանէն։ — Այս աթոռը նստող Պատրիարքներ կը կոչուին նաև Վանահայր, վասն զի կը հսկեն Ցնորինական սուրբ Տեղերուն և Վանքերուն վրայ։

Պատրիարքութիւն Կ. Պոլսոյ

Երբ Ֆաթիհ Սուլթան Մէհմէտ կը նուաճէ Յոյներն, և կ'առնէ Կոստանդնուպոլիսը, շատ մը գաղթականներ թէ՛ Սեբաստիայէն և թէ՛ ուրիշ տեղերէ բերել տուած ըլլալով՝ Պրուսայի Յովակիմ եպիսկոպոսը, որուն հետ յարաբերութիւն ունենալով սերտ բարեկամ էր, անոնց Պատրիարք (Փարրիք) կը կարգէ, 1461 թուականին։ Անոր յաջորդները մինչեւ ցայսօր Թուրքիոյ Հայոց վրայ իշխող ու հոգեւոր հայր են։

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Նիկիոյ ժողով (325 թուին)

Աղէքսանդրացի Արիոս, որ գիտուն և ճարտար եկեղեցական մ'էր, (Դ. դարուն) մոլորութեան մէջ ինկաւ. կը վարդապետէր թէ Աստուծոյ Որդին հաւասար չէր Հօրը, և ո՛չ Անոր բնութենակից. ստեղծուած է, և ո՛չ թէ Աստուած։ Այս խաբեբան շատերը համոզեց։

Կոստանդիանոս քրիստոնեայ կայսրը ժողով գումարեց Նիկիա քաղաքը։ Ամէն կողմերէ ժողովեցան եպիսկոպոսներ և քահանաներ, որոնց մէջ էր նաեւ մեր Ս. Արիստակէս՝ որդի Լուսաւորչի։ Այս ժողովին մէջ դատապարտեցին Արիոսը 318 Հայրապետներ, և միաբան հաստատեցին ու դաւանեցան Քրիստոսի՝ Հայր Աստուծոյ հետ հաւասար և համագոյակից ըլլալը։ Հոն խմբագրեցին Հաւատամքը, որ կը կոչուի Նիկիական Հանգանակ։

Արիոս աքսորուած էր. երբ դարձաւ, ուզեց խռովութիւն սերմանել, բայց շատ ժամանակ չ'անցած՝ տաժանելի մահով մեռաւ, 336 թուականին։

Կոստանդնուպոլսոյ ժողով (381 թուին)

Մակեդոն, որ Պատրիարք էր Կ. Պոլսի, ուզեց նորահնար վարդապետութեամբ նշանաւոր

ՍՍԱՂ։ Ասոր մոլորութիւնն էր վարդապետել թէ Հոգին սուրբ Աստուած չ'է, այլ առաջին դասի հրեշտակ մը։ Այս անմիտ եւ ծաղրական խմբատակը շատերն հմոզեց։

150 Հայրապետներ Կ. Պոլիս ժողովուեցան և դատապարտեցին Մակեդոնը։ — Մակեդոնեանք երբեմն կոչուեցան Մարաթոնեանք, վասն զի Նիկոմիդիոյ յոյն եպիսկոպոսը՝ Մարաթոնիոս՝ Ջատագով եղաւ Մակեդոնի կարծիքին։

Այս մոլորութիւնը թէպէտ նղովքէն վերջ տարածուեցաւ ժողովուրդին մէջ, ինչպէս նաև մեներատանները, բայց ասոր անդամներն առանձին եպիսկոպոս և եկեղեցի չ'ունէին երկար ժամանակ։

Եփեսոսի ժողով (431) թուին

Քրիստոսի 430 թուին, խնդիր եղաւ Կ. Պոլսի մէջ թէ սուրբ Կոյսը պէ՞տք էր անուանել մայր Աստուծոյ, թէ լոկ մայր Քրիստոսի։ Այն ժամանակի յոյն Պատրիարքը Նեստոր, եկեղեցիին մէջ ժողովրդեան քարոզեց թէ պէտք չէ սուրբ Կոյսը կոչել մայր Աստուծոյ։ « Միթէ կարելի՞ է, կ'ըսէր, որ Աստուած մայր ունենայ. միթէ հնա՞ր է որ արարած մը ծնանի Արարիչը։ Մարիամ ո՛չ թէ Աստուած ծնաւ, այլ Քրիստոսը, արդ՝ պէտք է կոչել զանի Քրիստոսածին կամ Քրիստոսամայր, և ո՛չ Աստուածածին։ »

Թէոդոս Թագաւորը ժողով գումարեց Եփեսոս քաղաքին մէջ։ Ամէն կողմէ հաւաքուեցան

եկեղեցականներ, որոնք թուով 260 էին։ Նեստորի մոլորութիւնն հերքուեցաւ այս ժողովին մէջ, որուն պատմութիւնը մեր սուրբ Հայրապետներն ընդունեցին իրենց աշակերտներէն՝ որոնք հոն ներկայ էին։

* * *

Այս երեք Տիեզերական-ժողովները, զորոնք կ'ընդունի և որոնց յիշատակն առանձին կը կատարէ Հայոց եկեղեցին, Սուրբ կը կոչուին. վասն զի ընդհանուր եկեղեցին իր ներկայացուցիչն ունեցած է հաւատքի դաւանութիւններուն և էական վարդապետութիւններու մասին։

Յունական և Պապական եկեղեցիները ուրիշ շատ մը ընդհանրական ժողովներ կ'ընդունին, ինչպէս և Քաղկեդոնի (Դատը քէոյ) ժողովը, որուն նկարագիրը պիտի սորվինք Եկեղեցական Պատմութեան մէջ։ Այդ ժողովներուն մասնակցութիւն չէ ունեցած Հայոց եկեղեցին, և զերծ մնացած է նորահնար վարդապետութիւններէ։

Նուիրական մատեաններ

Ճաշու գիրք. — Կը պարունակէ Հին և Նոր Կտակարաններէ ընթերցումներ, ճառեր, Ս. Հաղորդութեան, Ապաշխարութեան, Հոգեգալստեան, Վարդավառի, Զրօրհնէքի և Ոտնալուայի

քարոզներ, տաղեր և աղօթքներ։

Մաշտոց. — Եկեղեցիի ծիսարանն է. կը պարունակէ Զեռնադրութիւնն իր աստիճաններով, քահանայաթաղը, աշխարհաթաղը, Մկրտութեան և Պատկի խորհուրդները, Եկեղեցիի հիմնարկէքը, Խաչի վրայ, Հայրն, Հայրն։ — Ս. Մեսրովպ, որ և Մաշտոց, գլխաւոր կարգաւորիչն եղած է եկեղեցական արարողութիւններուն և անոր անունով այս գիրքն ալ կոչուած է Մաշտոց։

Տօնացոյց. — Տէրունական և Սուրբերու տօներուն, լուր և պահքի օրերուն մէջ ընթերցումներու, գիրքերու և շարականներու ուղեցոյցն է՝ երկու մասի բաժնուած։

Ժամագիրք. — Հայոց Ս. Եկեղեցիին ժամերգութիւններուն հաւաքածուն է՝ առանձին մասերու բաժնուած։

Սաղմոս. — Դաւիթ մարգարէին քնարական բանաստեղծութիւններն ու աղօթքները՝ ութը ձայնի վրայ դասաւորուած։

Խորհրդատետր. — Ունի իր մէջ Ս. Պատարագի խորհուրդն և անոր յարակից աղօթքները։

Նարեկ. — Ս. Գրիգոր Նարեկացի մեծ վարդապետին երկնաշունչ աղօթքներուն ամփոփոյքն է։

Տաղարան. — Պատարագի արարողութիւնը, մեղեդիներ, տաղեր և գանձեր կը պարունակէ։

Յայսմաւուրք. — Տէրունական տօներու վրայ ճառեր, և սուրբերու վարքին ու նահատակու-

թիւններուն պատմութիւնն է, զոր մեծ մասամբ հաւաքած և շարադրած է Գրիգոր Վկայասէր կաթուղիկոսը։

Շարական. — Մեր երանաշնորհ նախնիքներու բանաստեղծական երգերուն հաւաքածուն է՝ նուիրուած աստուածային փառքին, Յիսուսի մարդեղութեան և սուրբերու նահատակութեան գովեստին։

ՅԻՍՈՒՍԻ ԺԱՄԱՆԱԿ ԱՂԱՆԴԱՒՈՐՆԵՐ

Փարիսեցիներ

Այս աղանդաւորներ Հրեաներու մէջ տարածուած էին։ Փարիսեցի կը նշանակէ բաժնուած, որոշուած, որպէս թէ զատուած էին հասարակ ժողովուրդէն՝ իրենց սրբութեամբ և հանճարով։ Փարիսեցիներու վարդապետութիւնն էր յարգել հին կտակարանը, ընդունիլ աւանդութիւն, ամեն օր լուացում կատարել, ինչպէս նաև երկար աղօթքներ, ողորմութիւն տալ, մանաւանդ հեռանալ մաքսաւորներէն և հեթանոսներէն. երկու անգամ պահք կը բռնէին շաբթուան մէջ։

Իրենց մարմինները կ'օծէին ի ցոյց հասարակութեան. հոգին անմահ համարելով՝ կ'ընդունէին հանդերձեալ կեանքը, Հայրն։ — Այս փա-

ըիսեցիներուն մէջ կային բարեպաշտ մարդեր, որպէս Արեմաթացին Յովսէփ, Նիկոդիմոս վարդապետ, Ծերունին Սիմէոն։ Սաւուղն ալ (Պօղոս) փարիսեցի էր։ Այս աղանդաւորներ կը գործածէին գրապանակներ, որոնք մագաղաթեայ տոմներ էին և որոնց վրայ գրուած կ'ըլլային օրէնքէն խօսքեր։

Շատ տեսակ փարիսեցիներ կային, ինչպէս՝ Կորարունիֆ-փարիսեցի, Արիւնճակաս-փարիսեցի, Կորաֆամակ-փարիսեցի, Ի՞նչ կայ գործելու՝ կը գործեմ փարիսեցի, Կեղծաւոր-փարիսեցի, և այլն։

Սադուկեցիներ

Սադուկեցիները Քրիստոսի ժամանակ Հրեաներուն մէջ աղանդաւորներ էին. թէեւ իրենց գաղափարով կը տարբերէին Փարիսեցիներէն, սակայն Յիսուսը մեռցնելու մասին միաբան եւ համախորհուրդ էին։ — Սադուկեցի անունը եբրայեցերէն կը նշանակէ անձնարդար, բայց ոմանք կ'ըսեն թէ Սադովկ անուն քահանայէ մը սկսած է որ հիմնադիրն եղած է աղանդին։

Սադուկեցիներ ամեն աւանդութիւն կը մերժէին. միայն Ս. Գիրքը կը ճանչնային։ Ս. Հոգի, հրեշտակներ, սատանայ և մեռելներու յարութիւն չ'էին ընդուներ, և կ'ուրանային դատաս-

տանը։ — Այս փիլիսոփաներուն վարդապետութիւններն ընդունելի չէին հասարակ ժողովուրդին, սակայն Հրեաներու ժողովին մի քանի անդամները Սադուկեցի էին, նոյնպէս Առաքեալներու ժամանակ Սադուկեցի էր քահանայապետը։

Հերովդէսեաններ

Այս անունը առնուած է Հերովդէս Թագաւորէն։ Անոնց ջանքն էր Հրեաներուն մէջ մտցնել հեթանոսական և կռապաշտական սովորութիւններ։

Հերովդէս հպատակ և հարկատու էր Հռովմայեցիներուն, ուստի անոր կուսակիցներ կը պնդէին թէ՝ պէտք էր կայսեր հարկ տալ, որուն հակառակը կը պնդէին Փարիսեցիք։

Դպիրներ

Ժողովներու ատենադպիրներուն պէս, գրելու և հաշուելու կարող անձեր էին։ Եբրայեցիներուն մէջ օրէնքը կ'ուսուցանէին և մութ ու խրթին տեղերը կը պարզէին։ Շատ մը դպիրներ կային Հրեաներուն մէջ, ինչպէս Եզրաս, որ անուանի, հաւատարիմ և գիտուն քահանայ մ'էր։ — Դը-

պիրները երբեմն, Աւետարաններուն մէջ, կոչուած են Օրինական, Վարդապետ օրինաց։

Ասոնք ալ փարիսեցիներուն համակարծիք էին Յիսուսը մեռցնելու մասին։

Յեսսեաններ

Յեսսեանները աղանդաւորներ էին՝ իրենց անձերը միակեցական վարքի նուիրող և մարմինի ճգնութեան պարապող։ Երդումէ կը զգուշանային, կերակուրներէ կը խորշէին և լոկ ջուրով կը գոհանային։ Սպիտակ զգեստներ կը հագնէին, ամենայն ջերմեռանդութեամբ շաբաթուան օրերուն պահք կը բռնէին։ Ասոնց մէջ առաւել խստակրօնները կը հրաժարէին կիներէն, և անոնք որ ամուսնացած էին, միանգամ որդեծնութենէ վերջ, այլ եւս ամուրի կը մնային։ Կ'արհամարհէին ամէն իշխանութիւն՝ Աստուած միայն ճանչնալով տէր եւ իշխան ամենուն։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳՐԱԴԱՐԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
СССР Ереванская Библиотека
7/XI 1922
Մասնիկեան
ՄԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Դաւթեան Գործակալութիւնը

ԿԵԴՐՈՆՆԷ

ԳՊՐՈՑԱԿԱՆ ՊԱՇՏՕՆԷԻՑ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Դաւթեան Գործակալութեան

Թիւ 16, Գազասքէր խան

		Դահեկան
1. Ա. Վարժութիւն Մանկանց,	Վէցերրորդ Տիպ	3
2. Բ. » »	Չորրորդ »	5
3. Գ. » »	Երրորդ »	5
4. Տարրական Քերականութիւն	Չորրորդ »	2
5. Լրացուցիչ Դասընթացք	Երկրորդ »	3
6. Փնջակ, պատկերազարդ	Երրորդ »	1½
7. Փունջ, աշխարհ. Հաւաքածոյ	» »	3
8. Երկրորդ Փունջ	» Երկրորդ »	6
9. Գործնական Ընթացք Շարադրութ.	» »	3
10. Բանալի Շարադրութեան	» »	10
11. Ընտիրաբան Հայ լեզուի	» »	2
12. Սկզբունք Հատածոյնութ. եւ Շարադասութ.		2½
13. ALPHABET FRANÇAIS Որ. Ս. Հաթէպլեան		2
14. Տարրական ընթացք Կրօնի ուսմ. Վ. Ապանեան		2
15. Պատկերազարդ Այբբենարան (նոր ոճով)		½
= 100ը 25 Դահեկան =		
16. Ցայտագիր Դաւթեան Գործակալութեան		2
17. Ծաղկաթաղ Հաւաքածոյ, Միջին տրջաց		4
18. Դպրոցավարութիւն, գործ Emerson E. White-ի թարգմ. Ս. Մ. ԴԱՍԱՊԵԱՆ. — Կրթիչներուն եւ դասատարակութեան բարեկամներուն համար անհրաժեշտ գիրք.		5
19. Առածապատում. — 50 առածի մեկնութիւնն է ոտանաւոր — Գործ Հ. Պենենեանի		5
20. Համառօտ Կրօնագիտութիւն. Ա. Հաբէլեանի. Միջին կարգերու համար ջերմապես յանձնարարուած գրոյկ մ'է		3

رعليه‌ده بغچه قپوسنده قاضی عسکر خانده سمپاد داودیان

S. DAVIDIAN, 16, Kazaskér han, Bahdjé kapou

Constantinople

350

2013

350